9 ԱՊՐԻԼ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 55(5138)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# «Դիակ» այդուհանդերձ կլինի

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Փակ սրահներում մասսայական տեսարանների, արարողությունների սիրահարները այսօր կարող են լինել Մարզահամերգային համալիրում, իսկ եթե ցանկություն կա բացօթյա գրեթե նույն արարողության ականատեսը լինելու, ապա, խնդրեմ, Ազատության հրապարակ. ճիշտ ժամը 12-ին հրապարակում ու համալիրում տեղի կունենան միեւնույն արարողությունները, ու այնպես չէ, որ համալիրում տեղի ունեցածն ուղիղ եթերով կցուցադրեն հրապարակում. հրապարակն ի՛ր երդումը պետք է տա, համալիրն՝ իր:

Բայց եւ այնպես այս երկուսից մեկը, ավելի ճիշտ՝ այս երկուսից մեկի հերոսը պետք է էլ «չլինի»:

Հրապարակում, ինչպես գիտենք, Րաֆֆի Հովհաննիսյանը դեռ որոշ ժամանակ առաջ հայտարարեց. «Սերժ Սարգսյանը կերդվի միայն իմ դիակի վրայով»... Ավելի ուշ Րաֆֆին Սերժ Սարգսյանին ուղղված իր հայտնի նամակներից մեկում ընդգծեց, որ ինքը կարող է եւ հանդուրժել Սերժ Սարգսյանի նախագահությունը, եթե որոշ գերատեսչությունների ղեկավարումը հանձնարարվի ընդդիմությանը՝ ի դեմս ժողովրդի, իսկ ժողովուրդն էլ՝ ի դեմս Րաֆֆի Հովհաննիսյանի: Այս ամենից որոշ ժամանակ անց նույն Րաֆֆին, արդեն իր մարզային շրջագայությունների ժամանակ, հայտարարեց, թե «ապրիլի 9-ին Րաֆֆիից որեւէ բան չպահանջեք...», նախորդ ուրբաթ օրն էլ Րաֆֆին հայտարարեց, որ ապրիլի 9-ին, ուղիղ 12-ին, հավաքվելու են հրապարակում, երդվելու են, հետո միմյանց շնորհավորելու են, տոնելու են ժողովրդի հաղթանակը, ապա, ժամը երեկոյան 5-ին, «գնալու ենք իշխանությունը վերադարձնելու ժողովրդին»: Մի տեսակ անհասկանալի է. օրինակ այն, թե ինչպե՞ս կարող է Րաֆֆին «իշխանությունը վերադարձնել ժողովրդին», եթե նույն այդ ժողովուրդը «ապրիլի 9-ին Րաֆֆիից ոչինչ չպետք է պահանջի»: Կամ, եթե «իշխանությունը դեռ պետք է վերադարձվի ժողովրդին», ապա էլ ի՞նչ ժողովրդի հաղթանակ է տոնելու Րաֆֆին Ազատության հրապարակում, «համազգային երդումից մինչեւ երեկոյան ժամը 5-ը»:

Տես էջ 3

# Ականի պայթյունից զոհված պատանիները ռազմաբազայի տարածքում մետաղ էին հավաքում

Կիրակի ցերեկը՝ ժամը 4-ի սահմաններում արտակարգ իրավիճակների նախարարությունից ահազանգ են ստացել, որ Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի մոտակայքում՝ ՌԴ թիվ N տանկային հրաձգարանի տարածքում, պայթյունից մահացել է 2 երեխա: Հրաձգարանի տարածքում ականի պայթյունից զոհվել են Վահրամաբերդ գյուղի բնակիչներ 12-ամյա Արթուր Մկրտչյանն ու 16-ամյա Մուշեղ Գեւորգյանը: Ռուսական ռազմակայանը գտնվում է գյուղի տարածքի դաշտում: Վահրամաբերդի գյուղապետ Վահրամ Մարտիրոսյանի փոխանցմամբ՝ Արթուր Մկրտչյանի հայրը կիրակի գնացել է դաշտ ոչխարներին արածացնելու, տղաներն էլ հետեւել են նրան:

«Երբ հայրը գնացել է ջուր բերելու, երեխաները տեսել են ականները, գնացել են մոտը, խաղացել, հարվածել են, ու ականները պայթել են: Հայրը, պայթյունի ձայնը լսելով, վազել է դեպի երեխաները, սակայն նրանց մահացած է գտել», «Ազգ»-ի հետ զրույցում ասաց գյուղապետը՝ հավելելով, որ տարածքն արգելված չէ, 1000 հա է, պարսպապատված չէ:

Մարտիրոսյանի խոսքերով՝ գյուղում բոլորը գիտեն, որ տարածքը վտանգավոր է, սակայն այլ ելք չունենալով այդ դաշտում են իրենց անասուններն արածեցնում: «Հիմա գյուղում բոլորը շոկի մեջ են, Արթուրի եւ Մուշեղի ընտանիքները բազմանդամ են, ապրում են ծայրահեղ ծանր պայմաններում: Նրանց տան կերակրողները տան տղամարդիկ են, ովքեր հովիվներ են: Մկրտչյանների ընտանիքում՝ 8, իսկ Գեւորգյանների ընտանիքում 6 երեխա կան: Նրանց վիճակը սարսափելի է, անգամ գումար չունեն հուղարկավորություն անելու»:

Մեզ հետ հեռախոսազրույցում Ռուսաստանի Հարավային զինվորական օկրուգի մամուլի ծառայության պետ, կապիտան **Կիրիլ Կիսիլեւը** ասաց, որ «պատանիները արհամարհել են ռուսերեն եւ հայերեն տառերով գրված ցուցանակը, որը արգելում է մուտքը դեպի տարածք, անօրեն կերպով մտել են «Կամխուդ»-ի զինափորձարան՝ մետաղ հավաքելու: Ներս մտնելու ժամանակ երիտասարդները նկատել են ական եւ փորձել են վերցնել: Տեղի է ունեցել պայթյուն, եւ մետաղ հավաքողները զոհվել են», ասաց Կիսիլեւը՝ հավելելով, որ հետաքննությունը շարունակվում է:

Գործի առնչությամբ դեռեւս քրեական գործ չի հարուցվել: Հիշեցնենք, որ Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռազմաբազան իրականացնում է մարտական հերթապահություն ԱՊՀ ՀՕՊ միասնական համակարգի շրջանակներում: 2010-ին Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներ Սերժ Սարգսյանն ու Դմիտրի Մեդվեդեւը երկարաձգեցին բազայի տեղակայման պայմանագրի ժամկետը մինչեւ 2044 թվականը: Բազան, որտեղ շուրջ 4,5 հազար զինվորական է ծառայում, զինված է Ս300Վ համակարգերով եւ «Էրեբունի» ավիաբազայում տեղակայված ՄԻԳ-29 կործանիչներով:

Հ. Հ.

# Համաշխարհային հայկական կոնգրեսի աշխատանքների տպավորիչ մեկնարկը




**Երեկ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում գումարվեց Համաշխարհային հայկական կոնգրեսի առաջին նիստը՝ Հայաստանում պաշտոնապես գրանցվելուց հետո: Կոնգրեսի հիմնադիր նախագահ Արա Աբրահամյանի նախագահությամբ գումարված նիստի օրակարգում առաջին հարցը վերաբերում էր ստեղծագործական-մշակութային ամենամյա մրցույթների կազմակերպմանը՝ արդեն համահայկական տարողությամբ: Նիստը վարող Արամ Գ. Սարգսյանի բացման խոսքից հետո արտահայտվեցին Հայաստանի ստեղծագործական գրեթե բոլոր միությունների ղեկավարները, որոնք մրցանակային ֆոնդի կրկնապատկման առթիվ իրենց գոհունակությունը հայտնելուց հետո ներկայացրին տարբեր առաջարկներ համահայկական ստեղծագործական այդ մրցույթները առավել արդյունավետ դարձնելու, դրանք որպես նոր խթան մեր մշակույթին ծառայեցնելու համար:**

**Ելույթ ունեցավ նաեւ Արա Աբրահամյանը, որ նոր էր վերադարձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումից: «Նախագահ Սարգսյանը խնդրեց հստակեցնել մեր գործունեության ծրագիրը», տեղեկացրեց Ա. Աբրահամյանը, որն իր հերթին կարեւորեց սփյուռքահայության ակտիվ մասնակցությունը հանրապետության կայացման եւ ուժեղացման, ներքին կյանքի բարելավման գործում, հույս հայտնելով, որ Կոնգրեսի հետագա ծրագրերը կնպաստեն դրան: Նա շեշտեց, որ Կոնգրեսն արդեն կրկնապատկել է իր բյուջեն եւ պատրաստ է շարունակելու իր համագործակցությունը ՀՀ սփյուռքի եւ մշակույթի նախարարությունների, ստեղծագործական միությունների եւ ՀՀ զինված ուժերի հետ եւ իրականացնել համատեղ ծրագրեր: Պրն Աբրահամյանը տեղեկացրեց, որ Կոնգրեսի կենտրոնի շինարարությունը Հյուսիսային պողոտայում կավարտվի այս տարվա վերջին կամ հաջորդ տարվա սկզբին եւ այն կլինի սփյուռքի նախարարության հետ սփյուռքահայության տունը:**

**Օրակարգի 2-րդ հարցը վերաբերում էր Ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Հնչած ընդհանուր գաղափարն այն էր, որ անհրաժեշտ է, ինչպես ժամանակին միջազգային իրավագիտության մեծ երախտավոր Յուրի Բարսեղովն էր առաջարկել, ընդդեմ Թուրքիայի դատական գործ հարուցել միջազգային ատյաններում: Պրն Ա. Աբրահամյանը խոստացավ առաջիկա հոկտեմբերին եւս մեկ անգամ գիտաժողով հրավիրել Երեւանում՝ այս միեւնույն հարցով եւ եզրակացությունը հղել ՀՀ իշխանություններին:**

**Վերջում քննարկվեց Կոնգրեսին կից հոգաբարձուների խորհուրդ ստեղծելու հարցը, որի անդամներից երեքն արդեն հայտնի են՝ Արա Աբրահամյան, Սամվել Կարապետյան եւ Արսեն Ղազարյան:**

**Նիստի ավարտին պրն Ա. Աբրահամյանի առաջարկով ներկաները շնորհավորեցին Կոնգրեսի փոխնախագահ, նախկին պետական գործիչ Գեորգի Տեր-Ղազարյանցին՝ ծննդյան 90-ամյակի առթիվ:**

# Ռուսական խռովություն Ադրբեջանում

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Խոսքը Իսմայիլլիի շրջանի Իվանովկա գյուղում անցած հանգստյան օրերին տեղի ունեցած դեպքերի մասին է: Ըստ տեղեկությունների՝ գյուղի մի խումբ բնակիչներ «հարձակվել են գործադիր իշխանության ներկայացուցչի տան վրա, քարկոծել», որից հետո ոստիկանները գյուղը շրջափակել եւ մարդկանց հանդեպ հաշվեհարդար են տեսել: Կան տասնյակ ձերբակալվածներ: Իսմայիլլիի գործադիր իշխանությունում միջադեպը բացատրել են «գյուղական դիսկոտեկան փակելու դեմ երիտասարդների բողոքով»: Իսկ թե ինչո՞ւ է նման որոշում կայացվել, հետեւել է «ուշագրավ» մեկնաբանություն՝ «երիտասարդները փոխանակ իրենց գործով զբաղվելու, ամբողջ ժամանակն անցկացնում էին այնտեղ»:

Իվանովկան Ադրբեջանի միակ ռուսաբնակ գյուղն է, որ դիմացել է փորձություններին: Սակայն այստեղ վերջին տասնամյակում ռուս բնակչությունը կրկնակի նվազել է: Գյուղը փաստորեն կործանման եզրին է: Ժամանակին Հեյդար Ալիեւը, խաղալով ռուս բնակչության համայնավարական զգացմունքների վրա, որոշում է կայացրել Իվանովկայի կոլտնտեսությունը պահպանելու մասին: Խորհրդային տարիներին դա հարուստ տնտեսություն է եղել:

Տես էջ 2

# Wikileaks-ի նոր հրապարակման մեծ մասը կապված է Քիսինջերի հետ

Անցյալ ամառվանից Լոնդոնում Էկվադորի դեսպանատանը բնակվող Wikileaks կայքի հիմնադիր Ջուլիան Ասանժը հրապարակել է ԱՄՆ դիվանագիտական փաստաթղթերի նոր, խոշոր խմբաքանակ: Խոսքը ավելի քան 2 միլիոն վավերագրերի մասին է, որոնք վերաբերում են 1973-1976 թթ. եւ ներառում են պետքարտուղար Հենրի Քիսինջերի նամակագրությանը:



Թեեւ հրապարակված փաստաթղթերն այլեւս գաղտնի չեն համարվում, բայց դրանցից շատերը դեռ դժվարամատչելի են. դրանց ընթերցումը ԱՄՆ-ում թերեւս հնարավոր է միայն Արխիվների եւ վավերագրերի ազգային վարչության միջոցով, նշում է Wikileaks-ը:

Այժմ այդ բոլոր փաստաթղթերը հրապարակված են: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ 2 մլն վավերագրերից 1,7 միլիոնը կազմում են Հենրի Քիսինջերի նամակները ու դրանց պատասխանները:

1973-1976 թվականները «սառը պատերազմի» առավել լարված տարիներն են: 1973-ին Չիլիում գեներալ Աուգուստո Պինոչետի գլխավորությամբ կատարվեց պետական հեղաշրջում, սպանվեց սոցիալիստ նախագահ Սալվադոր Ալիենդեն: Ամերիկացի դիվանագետները եւ հատուկ ծառայությունների աշխատակիցները կապեր ունեին խռովարարների հետ: Ուստի Արեւմուտքում հրապարակախոսներից եւ պատմաբաններից շատերը ԱՄՆ կառավարությանը եւ անձամբ Հենրի Քիսինջերին մեղադրում են Չիլիի հեղաշրջմանը մեղսակից լինելու մեջ: Իսկ 1970-ականների կեսերին ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերություններում սկսվեց «լիցքաթափման» եւ լարվածության թուլացման ժամանակահատված:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

# Հայաստանի ընտրությունները՝ ԵԽԽՎ ապրիլյան նստաշրջանում

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն իր գարնանային նստաշրջանում, որ տեղի կունենա ապրիլի 22-26-ը Ստրասբուրգում, պատրաստվում է քննարկել Հայաստանում նախագահի ընտրությունների դիտարկման արդյունքները, որոնք ներկայացնելու է նորվեգացի վեհաժողովական Քերին Ուոլդսեթը: Հայաստանի ընտրություններին առնչվող հարցի քննարկումը նախատեսված է նստաշրջանի հենց առաջին օրը, սակայն առայժմ քննարկման նյութ զեկույցը դեռեւ հասանելի չէ:

Թե ինչպիսին կլինի հայաստանյան ընտրական քննարկումը, կարելի է դատել ելնելով այն ամենից, ինչ ԵԽԽՎ դիտորդները նախ հայտարարեցին դեռեւ Երեւանում նախընտրական շրջանում գտնվելու ընթացքում: Մասնավորապես, վեհաժողովի դիտորդները մի շարք մտահոգություններ էին հայտնել հենց նախընտրական իրավիճակի, փաստացի ընտրացուցակների շարունակական ու էական անճշտությունների, ընտրությունների նկատմամբ վստահության պակասից ելնելով որոշ քաղաքական ուժերի կողմից թեկնածու չառաջադրվելու առնչությամբ:

ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության ղեկավար **Դավիթ Հարությունյանն** էլ, իր իսկ տարածած նամակի համաձայն, «ցնցված ԵԽԽՎ պատվիրակության հաղորդագրության ձեւից եւ բովանդակությունից», այն որակել էր «արտատպված 2012 խորհրդարանական ընտրությունների մասին բարոնուհի Նիքոլսոնի պատվիրակության տխրահռչակ զեկույցից»: Ըստ Դավիթ Հարությունյանի՝ նախընտրական իրավիճակի մասին գնահատականը կազմվել էր նախօրոք, արտատպմամբ:

Սակայն դրական դժվար թե որակվի ԵԽԽՎ հետընտրական առաջին նախնական գնահատականը եւս, որ ինչպես ԵԱՀԿ ԺՀՄԻԳ եւ Եվրոմիության դիտորդական առաքելությունների հետ համատեղ ասուլիսում՝ ընտրություններից հետո: Այդ ասուլիսում ապրիլի վերջին Ստրասբուրգում դիտորդական առաքելության արդյունքները ներկայացնող նույն տիկին **Քերին Ուոլսեթը** հայտարարեց, թե «փետրվարի 18-ի ընտրություններում մի շարք ոլորտներում առաջընթաց է գրանցվել, թեեւ կարեւոր բարելավումներ դեռեւ անհրաժեշտ են»:

«Կարծում եմ՝ մրցակցություն կար: Առաջին եւ երկրորդ թեկնածուների՝ մոտ 58 եւ 30-ից ավելի տոկոս ձայների բաշխվածությունը մրցակցություն է կոչվում», ներկայացնելով միջազգային դիտորդական առաքելությունների նախնական զեկույցը՝ Երեւանում հայտարարեց Ուոլսեթը: Դրա հետ մեկտեղ, ասուլիսում նշվեց, որ ընտրությունները անցել են քաղաքական բանավեճերի եւ մրցակցության պակասով:

Սրան ավելացնենք նաեւ, որ ԵԽԽՎ դիտորդական պատվիրակությունը մյուս միջազգայինների հետ համատեղ հայտարարությամբ փաստել էր, որ «հանրային կառավարման անկողմնակալության բացակայությունը, ինչպես նաեւ վարչական ռեսուրսի չարաշահումը հանգեցրին պետության ու իշխող կուսակցության գործունեությունների ոչ հստակ տարանջատմանը»:

Ընտրական թեմայից զատ՝ Հայաստանին առնչվող մյուս հարցը, որ կարող է գոնե վեհաժողովի միջանցքներում, բյուրոյում կամ որոշ հանձնաժողովներում բարձրացվել ադրբեջանական պատվիրակների եւ վեհաժողով պատվիրակվող ադրբեջանական ճնշիչի ուժով, կարող է լինել ԵԽԽՎ Ղարաբաղյան հարցով ժամանակավոր հանձնաժողովի այդպես էլ չվերականգնվող, ասել է թե «չգործունեությունը»:

Ամեն դեպքում, այս հարցն էլ դեռեւ ԵԽԽՎ-ում նախագահող Ժան-Կլոդ Մինյոնի պարագայում դժվար թե լուծում ստանա հօգուտ ադրբեջանական ջանքերի, քանի որ վերջինիս բազմաթիվ հայտարարությունները վկայում են, որ հանձնաժողովի գործունեությունը չի վերականգնվի, թեեւ վեհաժողովի շրջանակներում կազմակերպվում են Հայաստանի եւ Ադրբեջանի պատվիրակությունների ղեկավարների հանդիպումներ:

Նշենք, որ վեհաժողովը, ի շարս կրոնական համայնքների իրավունքների ոտնահարմանը, երիտասարդությանը, միգրացիային եւ այլ հարցերին վերաբերող քննարկումների, որպես հրավիրյալների կլսի Ռումինիայի նախագահ Վիկտոր Պոնտային, Թունիսի նախագահ Մանսեֆ Մարզուկիին, Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն, Անդորրայի կառավարության ղեկավար Անտոնի Մարտիին եւ Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային վարչության ղեկավար Դիդիե Բուրկհալտերին:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

# Թուրքական բանկերն անձեռնմխելի չեն

Ինչպես հայտնի է, Լոս Անջելեսի դաշնային-շրջանային դատարանը որոշում էր ընդունել անցյալ ամիս թուրքական կառավարության դեմ բացված մի հայցի առնչությամբ, որը սխալ մեկնաբանության հետեւանքով պարտություն էր համարվել հայցվոր կողմի համար: Իրականում դա հաղթանակ էր, եւ դատարանը, ըստ Վարդգես Եղիայանի իրավաբանական գրասենյակից ստացված հաղորդագրության, համաձայն է հայ հայցվորների այն պնդումներին, որ թուրքական բանկերը կարող են պատասխանատվության կանչվել 1915-ի կոտորածների ժամանակ հայերի ունեցվածքը առգրավելու համար, քանի որ նման հարցը ուղղակիորեն կապվում է մարդու իրավունքների խախտման հետ:

Նման որոշում վերոնշյալ դատարանը ընդունել էր մոտ 15 ամիս անց այն օրից, երբ թուրքական Կենտրոնական բանկն ու «Թ. Ս. Զիրաաթ բանկասի» պետական ագրարային բանկը դիմել էին, որ չեղյալ համարվի իրենց դեմ հարուցված հայցը, քանի որ իրենք ինքնուրույն, անձեռնմխելի բանկեր են:

Հիշեցնենք, որ հայցերը (գործ համար 2:10-CV-09596 եւ գործ համար 2:10-CV-05636) թուրքական այդ բանկերի եւ Թուրքիայի կառավարության դեմ Լոս Անջելեսի Դաշնային-շրջանային դատարան էին ներկայացրել Ալեքս Բալաքյանն ու Կարպիս Դավոյանը դեռեւ 2010 թվականին, բողոքելով որ 1915-ի ցեղասպանության ժամանակ թուրքական կողմը ապօրինաբար խլել էր իրենց պատկանող հողը, կալվածքները եւ օգտվել հետագայում դրանց բարիքներից, երբ օսմանյան զորքերը բռնի քշել են իրենց հարազատներին Ադանայից եւ Թուրքիայի այլ վայրերից:

Ամերիկյան դատարանը նշել է, որ չնայած միջազգայնորեն ճանաչված անձեռնմխելիության կանոններ գոյություն ունեն, վերոնշյալ հայցերի դեպքում դրանք չեն կարող գործել, քանի որ խոսքը վերաբերում է մարդու իրավունքների խախտմանը եւ այլ երկրների, այդ թվում նաեւ Մ. Նահանգների հետ առեւտրական գործունեության խափանմանը, որոնց շուրջը Թուրքիան ստորագրել է միջազգային պայմանագրեր:

Հ. Ծ.

# Ռուսական խռովություն Ադրբեջանում

1-ին էջից

Ըստ էության, Իվանովկայի ռուս բնակչությունը զրկվել է հողի սեփականության իրավունքից, որը մնացել է համայնքային-պետական եւ ներկայումս Բաքվի մեծահարուստների եւ պետական չինովնիկների համար դարձել թիրախ. նրանք գործարքի մեջ են մտնում կոլտնտեսության նախագահի հետ եւ չնչին գներով հողամասեր ձեռք բերում: Իվանովկայում շփեղ առանձնատուն ունի աշխատանքի եւ սոցպաշտպանության նախարար Ֆիզուլի Ալեքպերովը:

Գյուղի բնակչությունը ստիպված վաճառում է տները եւ տեղափոխվում Ռուսաստան: Ինչպես կարելի է ենթադրել Իվանովկայի դեպքերի վերաբերյալ չափազանց ժլատ տեղեկատվությունից, այս հարցում բոլոր լրատվամիջոցները համերաշխ են: Ոչ ոք չի ուզում հետաքրքրվել ռուս բնակչության խնդիրներով, որովհետեւ նրանք անկախություն ստացած Ադրբեջանում այլեւս ավելորդ են: Պետությունը ադրբեջանական է, ուրեմն այնտեղ կարող են միայն ադրբեջանցիներ ապրել:

Թերեւս գործադիր իշխանության ղեկավարի տան քարկոծումը Իվանովկայի բնակչության վերջին հուսահատ քայլն էր՝ իրենց մասին հիշեցնելու Ադրբեջանի իշխանություններին: Բայց նրանք թույլ են տվել ճակատագրական սխալ՝ ժամանակին համաձայնելով պահել կոլտնտեսությունը, որտեղ փաստորեն աշխատում են հացփոր ճորտի կարգավիճակով: Այո, այդ մարդիկ աշխատավարձ չեն ստանում, այլ՝ բնամթերք, եթե տարին առատ է լինում: Ոչ՝ նրանք ամռան-վաղ աշնան ամիսներին տները վարձով տալիս են Բաքվից եկող հովեկներին:

Դե իսկ ինչո՞ւ թույլ տալ, որ ռուսները տիրեն ամառանոցային գյուղին: Ավելի լավ է այնպես անել, որ նրանք հեռանան: Իսկ որպեսզի հեռանալու եւս մի առիթ լինի՝ գործադիր իշխանությունը կարգադրում է Իվանովկայում դիսկոտեկը փակել, որպեսզի «երիտասարդությունն զբաղվի իր հիմնական գործով»: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ գործադիր իշխանության ներկայացուցչի տունը քարկոծողների «մեծ մասը, որ դպրոցահասակային պատանիներ են, արդեն ազատ են արձակվել»: Նշանակում է, որ խռովարարների մի փոքր մասն, այնուամենայնիվ, մնում է ձերբակալված: Եվ նրանց դեմ օրենքի ամբողջ խստությամբ քրգործ անպայման հարուցվելու է:

Իվանովկան դատապարտված է: Եվս մի քանի տարի, եւ այդ գյուղի ու նրա մարդկանց մասին Ադրբեջանում կմոռանան իսպառ: «Ի՞նչ Իվանովկա, ի՞նչ ռուս բնակչություն, այստեղ դարեր շարունակ միայն եւ միայն թյուրք-ազերիներ են ապրում»:

Տես նաեւ էջ 5

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Փոքրիկ Հայաստան Իսպանիայում

Արամ Մարգարյանը ավստրալահայ է՝ Սիդնեյից: Արձակուրդն անցկացնելու նպատակով մեկնել է Իսպանիա, Վալենսիա, որտեղ մի երեկո իր բուսակեր ընկերուհու հետ համապատասխան ռեստորան որոնելիս հանկարծակի, իր խոսքերով՝ «ուրտեղէ՞ն ուր», հայտնաբերել է «Բոկադիլլո» եւ «Արմենիա» վերտառություններով հայտարարություն մի ռեստորանի գովազդային վահանակում:



«Չիմանալով իսպաներեն, ես գաղափար չունեի, թե ինչ է «Բոկադիլլո» եւ ի՞նչ կապ կարող էր «Հայաստանը» ունենալ այդ ամենի հետ-, գրում է նա եւ շարունակում,- «մենք մտանք, վաթսունն անց մի աշխույժ կին դիմավորեց մեզ եւ բաց սրտով առաջարկեց զբաղեցնել ազատ սեղաններից մեկը: Մենք նստեցինք՝ պարզելուց հետո, որ մեր որոնած ճաշատեսակները կգտնենք այնտեղ: Սկսեցի անգլերենով հարցնել «Բոկադիլլոյի» մասին, բայց, տեսքից ենթադրելով, ներքին մի ձայն հուշեց ինձ հարցնել. «Հա՞յ եք»: Կինը զարմանքից բաց բերանը աջ ձեռքով փակելով, աչքերը լայն բացելով ու երեսին ուրախության ժպիտով պատասխանեց՝ այո:

Անունը Լուսիկ էր: Հինգ տարի առաջ էր եկել Երեւանից՝ աշխատելու, դրանից մոտ 5 տարիներ առաջ Իսպանիա արտագաղթած որդու ռեստորանում աշխատում էր օրական 15 ժամ:

Մինչ նա գնաց խոհանոց պատրաստելու մեր ուտելիքը, մենք զրուցեցինք նրա որդու հետ: Կես ժամ անց Լուսիկը հայտնվեց էկզոտիկ տեսք ունեցող բուսական ուտելիքով՝ ընկերուհուս համար, եւ հյութեղ ու անուշաբույր քաբաբ-քյուֆթա սնկով եւ սոխով՝ ինձ համար, ընկերակցությամբ, անշուշտ, չիփսի եւ սալաթի: Պարզ էր, որ այդտեղից կուշտ փորով էինք դուրս գալու:

Երեք շաբաթ է, ինչ դուրս էի եկել Ավստրալիայից եւ հիմա պետք է վայելեի տնական, մանավանդ հայկական ճաշատեսակ:

Քիչ անց մի բաժակ էսպրեսսո իր ձեռքում Լուսիկը միացավ մեզ: Հաճելի անձնավորություն էր, խոսում էր մեր պատմությունից, ճաշակույթից եւ համառությունից: Ափսոսում էր, որ Վալենսիայում քիչ հայեր կան, այդ պատճառով էլ հայկական եկեղեցի կամ դպրոց չկա այնտեղ:

Զրուցեցինք նաեւ այլ բաների շուրջը, եւ տեղեկացա, որ Երեւանում ավագ քույր ունի Հասմիկ անունով: Նա հեռախոսի համարը տվեց, որ զանգահարեմ, երբ հաջորդ անգամ այցելեմ Հայաստան, եւ խոստացավ մեզ հաջորդ անգամ տոլմա հյուրասիրել:

«ուրտեղէն ուր»՝ փոքրիկ մի Հայաստան Իսպանիայում: Ճիշտ են ասում՝ ամեն տեղ հայ կա:

Պատրաստեց Հ. Ծ.

# Հովիկ Աբրահամյան. «Համերաշխությունը բխում է մեր պետության եւ ժողովրդի շահերից»

Երեկ Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանը** պատասխանեց լրագրողների հարցերին:

Այսօր տեղի ունեցող նախագահ Սարգսյանի երդմնակալության հատուկ նիստին ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները չեն մասնակցում: Արդյոք նրանց հանդեպ պատժամիջոցնե՞ր են կիրառվելու. «Ես կանխատեսումներ չեմ անում եւ գտնում եմ, որ պատգամավորները պետք է ներկա լինեն հատուկ նիստին, չեմ ակնկալում, որ չեն մասնակցի»: Րաֆֆի Հովհաննիսյանը հրավիրել է Սերժ Սարգսյանին Ազատության հրապարակ` իր երդմնակալմանը. «Անլուրջ եմ համարում այդ հրավերը»: Ժողովրդի՞ն եք անլուրջ համարում, ճշտեց լրագրողը. «Դուք ժողովրդի անունի՞ց եք խոսում, Դուք դրա իրավունքը չեք վաստակել: Տրամաբանություն տեսնո՞ւմ եք այդ պահանջի մեջ»:

Պատասխանելով «Ինչպե՞ս կհանգուցալուծվի այդ իշխանություն- ընդդիմություն վեճը» հարցին` Հ. Աբրահամյանը նշեց, թե որեւէ վեճ չկա, կան սահմանադրություն, օրենքներ եւ ԿԸՀ որոշումը, ըստ որի նախագահ է ընտրվել Սերժ Սարգսյանը. «Այլոց խոսակցություններով, դատարկաբանությամբ չեմ զբաղվում, դատարկ խոսակցություններին չեմ ուզում պատասխանել: Եվ իմ կարծիքով` արդեն ժամանակը սպառվել է այդ հարցերը տալու կամ դրանց լուրջ պատասխան ակնկալելու»:

Ի վերջո Սարգսյան-Հովհաննիսյան երկխոսությունը կկայանա՞. «Առաջարկը եղել է երկկողմ եւ իրենց դաշտում է, իրենք էլ կորոշեն` կհանդիպեն-չեն հանդիպի. ես գտնում եմ` հանրապետության նախագահը շատ ճիշտ է վարվում, որ հրավիրում է Րաֆֆի Հովհաննիսյանին նախագահական շենք, այնտեղ քննարկելու հարցերը: Դա ճիշտ է, կոռեկտ է: Հանրապետության նախագահը շատ տրամաբանական դիմել էր Ր. Հովհաննիսյանին, որ գրիչ-թուղթ վերցնի, այցելի նախագահական` նստեն-քննարկեն: Իմ կարծիքով` Սերժ Սարգսյանը կպատասխանի հարցերին: Ես չեմ բացառում եւ ես գտնում եմ, որ երկխոսությունը միշտ պետք է լինի շարունակական, եւ ինչքան որ քաղաքական ուժերը երկխոսեն, այնքան կշահի պետությունը, ժողովուրդը: Ես գտնում եմ, որ համերաշխությունը բխում է մեր պետության եւ ժողովրդի շահերից»:

Սադրանքներ, ուժի կիրառում կարո՞ղ է լինել այսօր, իշխանության նախատրամադրվածությունն ինչպե՞ս է այս առումով. «Գոյություն ունեն անվտանգության ծառայություններ, իրենք կզբաղվեն իրենց վերապահված լիազորություններով»:



Եթե մյուս խմբակցությունները չմասնակցեն հատուկ նիստին, ի՞նչ հետեւություններ կանի Հ. Աբրահամյանը. «Ես հետեւություններ կանեմ, երբ նիստը սկսվի-ավարտվի», ասաց:

Լրագրողները ուզում էին իմանալ` Գագիկ Ծառուկյանը գալո՞ւ է հատուկ նիստին. «Գագիկ Ծառուկյանի վերաբերյալ հարցերով ինչո՞ւ եք ինձ դիմում, իրեն դիմեք»:

Ինչու երկրորդ նախագահին հրավեր կա, առաջինին` ոչ. «Ես տեղյակ չեմ` հրավեր կա՞, թե՞ ոչ: Մենք որեւէ մեկին ի՞նչ ունենք չհրավիրելու»:

Իսկ թե Րաֆֆուն ինչո՞ւ չեն հրավիրել` «Ինքը համարում է, որ ընտրված նախագահ է, ինքն էլ մեզ չի հրավիրել: Մի բանի վրա զարմանում եմ` դուք լուրջ մարդիկ եք, լուրջ գործով զբաղվեք, ի՞նչ հարցեր եք տալիս»:

Քաղաքական իրավիճակի հանգուցալուծումը լուրջ հարց չէ՞, որ մի քիչ մեղմվի իրավիճակը, հետաքրքրվեցինք. «Դրա համար մենք պետք է ավելի կազմակերպված աշխատենք, վեր հանենք բոլոր պրոբլեմները, խնդիրները, հանրության հուզող հարցերը, եւ փորձենք այդ հարցերին շատ արագ պատասխանել, դա է մեր խնդիրը լինելու ապագայում: Եվ ճիշտը դա է: Թե մեկը հայտարարում է` ինքն է նախագահ, մեկն ասում է` այս հրապարակում, մեկն ասում է` այն հրապարակում, ով է եկել, ով չի եկել` դրանք կարեւոր հարցեր չեն»:

Քաղաքական դաշտում ճամփաբաժան տեսնող լրագրողին էլ հակադարձեց. «Դուք դրան եք ձգտո՞ւմ լրագրողներով: Հատուկ ձեզ համար պատասխանում եմ` Սերժ Սարգսյանն ընտրվել է նախագահ, երկրորդ ժամկետում, մնացած բոլոր խոսակցությունները դատարկ խոսակցություններ են: Կարող է` մեկն էլ Մեղրիում իրեն նախագահ հռչակի, մեկն էլ` Շիրակում, լուրջ մարդիկ ենք: Գոյություն ունի ԿԸՀ, գոյություն ունեն ընտրական արդյունքներ, դրանցով ենք ուղղորդվում, կողմնորոշվում»: Այսինքն` Րաֆֆի Հովհաննիսյանի գործողությունները իրավական հարթությունից դո՞ւրս են` ճշտեց լրագրողը. «Բա ինչ են, իրավապահ մարմիններին դիմեք այդ հարցով»:

Հովիկ Աբրահամյանն ինքը հաշտության ու համերաշխության կողմնակից է: Նա մեջբերեց նախագահին, որը կոչ էր արել քաղաքացիական հասարակությանը, քաղաքական ուժերին` միասին լուծել երկրի խնդիրները. «Օրինակ` շատ լավ առաջարկ է արել նախագահը Ր. Հովհաննիսյանին` սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը գլխավորի: Իմ կարծիքով` դա շատ ճիշտ առաջարկ է, կկարողանա իրականացնել սահմանադրական բարեփոխումները, ինչ խնդիր տեսնում էր` միասին կլուծեինք»

«Կեղծիքներ են եղել` սահմանադրական բարեփոխում իրականացնի՞», հարցրեց լրագրողը. «Ի՞նչ կեղծիք է եղել, մի օրինակ չկարողացան բերել, խոսելով չէ: Մի տեղամաս բացեցին` ի՞նչ եղավ»: Ինքը` ԱԺ նախագահը մի անգամ Րաֆֆուն առաջարկ արել է, պետք է` մի անգամ էլ կանի: Լրագրողը հետաքրքրվեց` բացառո՞ւմ է Հովհաննիսյան-Սարգսյան հանդիպում. «Ես չեմ բացառում որեւէ հանդիպում, որեւէ քննարկում, ես ուզում եմ, որ բոլոր քաղաքական ուժերը համագործակցեն ի շահ պետության: Դա իմ ցանկությունն է: Ես առաջարկեցի` քննարկել խորհրդարանում: Այնպիսի հարցեր են առաջարկում դնել օրակարգում, որ անընդունելի են: Ես չեմ կարող մի հարց քննարկել, որ սահմանադրությանը հակասում է, օրինակ` նախագահական նոր ընտրություններ, արտահերթ խորհրդարանական ընտրություններ... դա ողջամիտ առաջարկություն չէ, որ քննարկենք, կստացվի` անլուրջ առաջարկ ենք քննարկում»:

Անդրադառնալով ավագանու ընտրություններին` Հ. Աբրահամյանը նշեց, որ ամեն ինչ անելու են, որ ընտրություններն անցնեն կոռեկտության սահմաններում եւ... «Հաղթի Հանրապետակա՞նը», լրացրեց լրագրողներից մեկը: «Եվ հաղթի Հանրապետականը` եթե գիտեք, էլ ինչու եք հարց տալիս»: Նա նշեց, որ ՀՀԿ-ի մրցակիցը համարում է բոլորին, ովքեր մասնակցում են ընտրություններին:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Ոստիկանության զգուշացումը հավաքների մասնակիցներին

Ըստ ոստիկանության երեկ տարածած հաղորդագրության` նախագահի նախկին թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանի կազմակերպած հավաքներում գնալով ուժգնանում է հակաիրավական, այդ թվում` ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված գործողությունների դիմելու միտումը, որի կենսագործման պայմաններում հավաքների խաղաղ բնույթը` կախված իրավիճակի զարգացումից, կդառնա մասամբ կամ ամբողջովին բովանդակազուրկ: Նման պարագայում ՀՀ ոստիկանությունը պետք է ձեռնամուխ լինի օրենքով սահմանված իր այլ պարտականությունների կատարմանը: Այսպես, համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ոստիկանությունը պարտավոր է հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ եւ բնականոն ընթացքը, եթե այլ կերպ հնարավոր չէ պահովել այն:

Հաղորդագրությունը զգուշացնում է, որ հանրորեն վտանգավոր արարքներ կատարողներին ՀՀ ոստիկանությունը հեռացնելու է հավաքի վայրից, իսկ եթե դա անհնարին լինի հավաքի մասնակիցների մեծ մասի կողմից նման գործողություններին միանալու կամ դրանց հավանություն տալու դեպքում, ապա ոստիկանությունը, համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, պետք է դադարեցնի հավաքը, քանի որ այլ կերպ չի կարող արգելափակել հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը:

Անխուսափելի եւ համարժեք միջամտությունից ու հնարավոր բախումներից խուսափելու համար ՀՀ ոստիկանությունը հորդորում է հավաքի կազմակերպիչներին եւ մասնակիցներին լիովին պահպանել լիազոր մարմնի որոշման պահանջները:

ՀՀ ոստիկանությունը հարկ է համարում եւս մեկ անգամ հատուկ շեշտել, որ իր աջակցությունը հավաքներին կարող է շարունակվել միայն այնքան ժամանակ, քանի դեռ հավաքը պահպանում է իր խաղաղ բնույթը եւ դրա անցկացմամբ անհամաչափ կերպով չեն սահմանափակվում այլոց սահմանադրական իրավունքները կամ հանրային շահերը, իսկ հավաքի ժամանակ հակաիրավական, հատկապես, հանրորեն վտանգավոր գործողությունները կամ դրանց անմիջական սպառնալիքը կարող են էապես նվազեցնել խաղաղ հավաքի պաշտպանության` օրենքով ամրագրված երաշխիքի պահպանման հնարավորությունը:

# Ապրիլի 9-ին` բնականոն ուսումնական գործընթաց

**Արձագանքելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը ուղղված հարցումներին` նախարարությունը հարկ է համարում տեղեկացնել, որ ապրիլի 9-ին Հայաստանի բոլոր ուսումնական հաստատություններում ընթանալու է ամենօրյա բնականոն ուսումնական գործընթաց:**

**Ի պատասխան լրատվամիջոցների այն հարցին, թե արդյոք ՀՀ ԿԳՆ-ն լրացուցիչ միջոցներ է ձեռնարկելու, հայտնում ենք, որ որեւէ հավելյալ կարգապահական միջոցառումներ եւ հրահանգներ գոյություն չունեն, որովհետեւ ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանվում են կարգապահական հարցերը ուսումնական հաստատություններում, մասնավորապես, «Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ կետերը համապատասխանաբար սահմանում են.**

**«5. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը պարտավոր է կատարել բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ եւ ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները:**

**6. Բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ եւ ներքին կարգապահության կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում սովորողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր` ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը` ներքին ակտերով սահմանված դեպքերում եւ կարգով»:**

ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ

# «Դիակ» այդուհանդերձ կլինի

*1-ին էջից*

Հրապարակը կարծես թե գնում է իր համար վնասակար ուղիով, երբ ամեն հաջորդ խոսք նախորդի տրամաբանական շարունակությունը չէ, երբ հստակ չէ ոչինչ, իսկ ինչն ամենաասոսկալին է հրապարակի համար` հստակ չէ ոչինչ հրապարակում հավաքվող ու այդ հավաքույթներից լուրջ ակնկալիքներ, սպասումներ ունեցող ժողովրդի համար: Ստացվում է, որ ապրիլի 9-ին գուցե «նորաստեղծ շարժումը մահանա», եւ մենք ունենանք դիակ, ինչպես եւ խոստացվել էր, ի դեպ:

Համալիրում պատկերը փոքր-ինչ այլ է: Նախ այնտեղ են լինելու Հայաստանի երեք նախագահներից երկուսը. երեկ Քոչարյանի գրասենյակը հայտարարություն է տարածել, որ երկրորդ նախագահը մասնակցելու է Սերժ Սարգսյանի երդմնակալության արարողությանը (Րաֆֆին կասեր` ուրեմն Քոչարյանը ժողովրդի հետ չէ): Այս փաստը, փաստորեն, երկրորդ պլան է մղում այն, թե կմասնակցի՞ արդյոք Սարգսյանի երդմնակալությանը Գագիկ Ծառուկյանն, օրինակ... Հիշեցնենք, նույն օրը, նույն ժամից համալիրում ԱԺ-ի հատուկ նիստ է գումարվելու, հետեւաբար այս նիստին պարտավոր են ներկա գտնվել ԱԺ-ի բոլոր խմբակցությունների բոլոր պատգամավորները, եթե, իհարկե, վերջիններս իրենց հավանական բացակայությունների համար հարգելի հիմնավորումներով հանդես չգան: Մինչդեռ ՀԱԿ խմբակցությունը, հայտնի է, որ ամբողջ կազմով չի լինելու համալիրում, ՀՅԴ-ն` նույնպես, «Ժառանգությունը» «ժողովրդի հետ է», ՕԵԿ-ն էլ` ՀՀԿ-ի: Այսինքն` միակ ինտրիգը` մասնակիցների առումով, ԲՀԿ-ն է, չնայած, կրկնենք, Քոչարյանը լինելու է համալիրում: Ու չնայած համալիրում, ի թիվս այլ օտարերկրացի բարձրաստիճան հյուրերի, լինելու է նաեւ հատուկ Սերժ Սարգսյանի երդմնակալության համար Երեւան ժամանած ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլա Բորդյուժան, այնտեղ գտնվողների անվտանգությունը ինչ-որ առումով կախված է լինելու հրապարակում եղածների խելամտությունից, եթե Րաֆֆին ցանկանում է պարզապես այլընտրանքային նախագահ դառնալ, եւ սա նկատի ունի «իշխանությունը վերադարձնել ժողովրդին» ասելով, այլ հարց է (ի դեպ, այդ ո՞ր դարաշրջանում է իշխանությունը պատկանել ժողովրդին, որ հիմա էլ վերադարձնում են-Հ. Ա.), իսկ եթե Րաֆֆին նկատի ունի այն, ինչը նկատի են ունենում բոլոր նրանք, ովքեր հրապարակում, հրապարակին ասում են, թե` «իշխանությունը վերադարձնելու ենք ժողովրդին», ապա գուցե այսօրվա զոհը դառնա համալիրը:

Երկու պարագայում էլ «դիակ» լինելու է... Աշոտ Մանուչարյանն ասում է` «ապրիլի 9-ին Հայաստանում կլինի դիակ` ժողովրդավարության դիակը»... Պարզապես, եթե ժողովրդավարությունը շարժումն է, ու եթե ապրիլի 9-ին այս շարժումը մահանում է, դա չի նշանակում, որ այլ շարժումներ չեն լինելու, հետեւաբար, խոսքը բոլորովին այլ տեսակի «դիակ»-ի մասին է:

# Հայաստան. Սփյուռքի ներդրումների կրճատման վտանգները

Տարիների ընթացքում Հայաստանի տնտեսության վատ վիճակը հաստատուն է դառնում, հարուցելով մի շարք վերլուծաբանների տագնապալի գնահատումները: Նման պայմաններում ազգային ջերմ հայրենասիրությամբ տոգորված սփյուռքի մասնավոր ներդնողների ֆինանսական աջակցության կշիռը էական է, չնայած այդ օգնությունը միեւնույն ժամանակ կախման մեջ է դնում Հայաստանին: Այդ տնտեսական օժանդակության ծավալը դժվար է հաշվարկել, բայց անչափ նշանակալի է եւ, զանազան գնահատումների համաձայն, կազմում է երկրի ՀՆԱ 10-70 տոկոսը: Արդ, 2008-ից ի վեր սփյուռքյան համայնքների եւ Հայաստանի հասարակության միջեւ խորացած տարաձայնությունները Երեւանում մտահոգում են դիտորդներից շատերին: Եթե Հայաստանին ֆինանսապես օգնելու այդ ներդնողների ցանկությունը զգալիորեն նվազի, երկիրը կկորցնի իր գլխավոր ռեսուրսներից մեկը: Ի դեպ, սփյուռքի ֆինանսական աջակցությունը վերջին տասնամյակում կրճատվել է: Պետության ժողովրդավարացման գործընթացը եւ թուրք-հայկական հաշտեցումը տվյալ խնդրի հանգույցներն են:

## Սփյուռք-Հայաստան. ներդրումների ավանդույթ

Հայաստանի պատմական տարածքների եւ արտերկրի հայկական համայնքների բացառիկ կապը դարեր շարունակ այդ ժողովրդի պատմության առանցքային տարրերից է: Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ. իրականացված ցեղասպանությունը, որը հայ համայնքին արմատախիլ արեց իր պատմական հողերի մի մասից, Հայաստանի համար մեծացրեց սփյուռքի մի կարեւորությունը թե՛ բնակչության թվի առումով եւ թե՛ որպես աշխարհաքաղաքական գործոն: Մոտավորապես մեկ դար Խորհրդային Հայաստանը եւ Արեւմուտքի հայ համայնքները պահպանում էին զգացմունքային հարաբերություններ, որոնք բարդանում էին «սառը պատերազմի», ինչպես նաեւ հայկական տարբեր քաղաքական կուսակցությունների գաղափարախոսական վեճերի պատճառով: Այնպես որ «երկաթե վարագույրի» վերացումից եւ ապա ԽՍՀՄ-ի փլուզումից հետո պատմական Հայաստանի եւ սփյուռքի հանդիպումը հայերից շատերը ընկալեցին որպես ազգի վերամիավորում:

## Հայերը աշխարհում

Աշխարհում հայերի ընդհանուր թիվը մոտ 11 միլիոն է: Հայաստանի բնակչությունը 3,3 միլիոն է, սփյուռքահայերի ընդհանուր թիվը՝ մոտավորապես 8 միլիոն:

1988 թվականին, երբ հայաբնակ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը անջատվեց Ադրբեջանից, սփյուռքի (մասնավորապես Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի հայերի) ոգեւորությունն անսահման էր: Հայկական բանակին նրանց ցուցաբերած էական աջակցությունը եւ ապա Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի ռազմական հաղթանակը հայրենասիրական խանդավառության փուլ դարձան ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ աշխարհի հայկական համայնքներում: Բազմաթիվ մտավորականների զգացողությունը հետեւյալն էր. ազգի աշխարհասփյուռ անդամները միավորվեցին հայերի թշնամիներին (ադրբեջանցիներին ու թուրքերին) հաղթելու եւ պատմությունից փոխվրեժ լուծելու նպատակով: Սփյուռքյան նախաձեռնությունների (ինչպես օրինակ՝ Ֆրանսիայի «Ղարաբաղ» կոմիտեի) միջոցով համերաշխության նոր վերելք արձանագրվեց համայնքի այն անդամների շրջանում, որոնց համահայկական զգացմունքները մինչ այդ հազվադեպ էին դրսեւորվել:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ավերակների վրա 1991-ին ստեղծված հայկական ինքնիշխան պետությունը նմանապես աճապարեց «ինստիտուցիոնալ» տեղ հատկացնել ազգային համայնքի այդ «ոչ-քաղաքացի» անդամներին: Տվյալ պետության եւ ուրիշ երկրների քաղաքացիների միջեւ ստեղծված ոչ իրավաբանական կապերը (մինչ այդ Հայաստանի հետ նրանց կապը լոկ ծագումնաբանական եւ մշակութային էր) իրենց բնույթով այնքան էլ տարածված չեն. արդեն 1990-ականների սկզբից Հայաստանի անվտանգության ազգային ռազմավարությունը իրոք նշում է սփյուռքի դերը Հայաստանի տնտեսական, մշակութային եւ արտաքին քաղաքականության մեջ եւ «արտերկրի հայերին» առանձնահատուկ տեղ է հատկացնում երկրի ճակատագրի կերտման մեջ: Փաստաթղթում նույնիսկ այն պնդումն է արվում, որ սփյուռքի հետ կապերի թուլացումը վտանգավոր կլիներ Հայաստանի համար:

Ժամանակի ընթացքում մի շարք քաղաքական ձեռնարկումներ ամրապնդեցին այդ ինստիտուցիոնալ կապը: Այսպես, 2007-ին մի օրենսդրական նախաձեռնություն մշակվեց սփյուռքահայերին երկքաղաքացիություն շնորհելու նպատակով: Ավելի ուշ՝ 2008 թ. նախագահական ընտրություններից հետո, չնայած ընկերությունների շրջանում մարդու իրավունքների եւ ժողովրդավարական ազատությունների հարցի հետ կապված լարվածություններին, նոր կառավարությունը ստեղծեց սփյուռքի հարցերի նախարարություն, որը փոխարինեց մինչ այդ դրանցով զբաղված ԱԳՆ հատուկ քարտուղարությանը:

## 2008-ի շրջադարձը. ժողովրդավարացման հարցը

1990-ականներին, երբ Հայաստանը հայտնվեց տնտեսական սուր ճգնաժամի մեջ, սփյուռքահայ ներդնողների օժանդակությունը վճռորոշ եղավ երկրի գոյատեւման համար: Սակայն Լեռնային Ղարաբաղի իրադրության հետ կապված անորոշության, երկրի շրջափակման առաջացրած տնտեսական ծանր կացության եւ ժողովրդավարացման գործընթացի ձգձգման պատճառով այդ սկզբնական խանդավառությունը թուլացավ: Այդ ժամանակվանից Հայաստանի հասարակության եւ սփյուռքի համայնքների տարաձայնությունները դարձան ավելի ու ավելի շոշափելի:

Ներքին սոցիալ-քաղաքական լուրջ խնդիրների բախվող Հայաստանի հասարակության եւ մեկենասներ ու տնտեսական ներդնողներ դարձած սփյուռքահայերի տարանջատման առաջին կետը ի հայտ եկավ 2008 թ. դժվարին նախագահական ընտրությունների կապակցությամբ: Իշխանությունները ժողովրդավարական ազատությունների կոպիտ ոտնահարումներ թույլ տվեցին ընդդիմության ցույցերի ճնշման ժամանակ, որը Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի շուրջը համախմբված՝ գործող նախագահի կուսակցությանը մեղադրում էր հաղթանակին բռնաշիրելու մեջ: Այդ ոտնահարումները դարձան կարեւոր շրջադարձ:

Ներքաղաքական ճգնաժամի դեմ հանդիման սփյուռքի գլխավոր ձայները չառաջարկեցին իրոք համարժեք պատասխան: Կենտրոնանալով գլխավորապես անվտանգության հարցերի վրա եւ գործելով Հայաստանը Ադրբեջանից ու Թուրքիայից բխող արտաքին վտանգից պաշտպանելու մտահոգությամբ, հայ համայնքը ընդհանուր առմամբ նախապատվությունը տվեց Երեւանի ուժեղ իշխանությանը՝ ի վնաս ներքին ժողովրդավարական զարգացման: Երեւանում քաղաքացիական հասարակության գլխավոր գործող ուժերը խորապես ափսոսացին մարդու իրավունքների եւ ժողովրդավարական ազատությունների ոտնահարումների գրեթե չհիշատակվելը այդ ձայների կողմից, որոնք, գործող ուժերի կարծիքով, չափից ավելի մտահոգված էին ստատուս քվոյի պահպանմամբ: Հակազդեցության այդ պակասը Հայաստանում ակնհայտորեն ընկալվեց որպես լռելյայն աջակցություն իշխանություններին:

Վերջին տասնամյակում Հայաստանի քաղաքացիների եւ սփյուռքի ազդեցիկ անդամների պահանջների զուգորդման առիթներ ընդհանուր առմամբ գրեթե գոյություն չեն ունեցել: Դրանից ծնունդ առած հիասթափությունը, որը իրարից տարբերող մտահոգությունների եւ նույնիսկ տարամետ շահագրգռությունների արտացոլանքն է, արտահայտվեց ոչ միայն Հայաստանում, այլեւ սփյուռքում: Քանզի, չնայած Հայաստանի կառավարության հայտարարություններին եւ երկրի ճակատագրում սփյուռքին դեր հատկացնելու ինստիտուցիոնալ ջանքերին, Երեւանի իշխանությունները որոշակիորեն չեն փորձել սփյուռքին մասնակից դարձնել որոշումների ընդունմանը՝ անկախ դրանց բնույթից: Տվյալ գործոնը մերժվածության զգացում է առաջացրել սփյուռքի համայնքներում, որոնք իրենց տեսնում են ներդնողների կամ նվիրատուների սահմանափակիչ դերում:

## Սփյուռքի դժվարությունները. անմիատարրություն եւ տնտեսական ինտեգրման պակաս

Տվյալ իրավիճակի ակունքում թերեւս համագործակցության թվացյալ կամքով քողարկված կառուցվածքային խնդիրն է. ազգի երկու բաղկացուցիչ մասերի տնտեսական միասնացումը անհնար է դարձել Հայաստանի պետության չկամության պատճառով, որը ցանկալի չի համարում տնտեսական ինքնավար ցանցերի ստեղծումը, ինչպես նաեւ այդ պետությունը «գրաված» կլանների, օլիգարխների եւ դրանից բխող կաշառակերության պատճառով:

Բացի դրանից, սփյուռքն ինքը միավորված չէ որեւէ անկախ եւ վստահելի հասարակական ուժի շուրջը եւ մինչեւ օրս մնում է մեծ մասամբ գործարար միջավայրի հետ կապված ցաքուցրիվ նախաձեռնությունների հույսին: Այդ անկազմակերպվածությունը հանգեցրել է տնտեսական ձեռնարկումների անմիատարրությանը, եւ ինստիտուցիոնալ զարգացումներն անկարող են եղել դրա դեմն առնել: Իրոք, Հայաստանի սփյուռքի գործերի նախարարությունը, որն ինքը բաժանված է երեք ճյուղի (Ամերիկա, Մերձավոր Արեւելք եւ ԱՊՀ-Եվրոպա), իր ստեղծումից ի վեր չի կարողացել կառուցվածքային կապեր ստեղծել Հայաստանի եւ սփյուռքի տարբեր ճյուղերի միջեւ, թեկուզ՝ տնտեսական փոխհարաբերությունների առումով: Այսպես, չնայած իրար հաջորդող նվիրատվություններին եւ ներդրումներին, սփյուռքը հնարավորություն չունեցավ տեւականորեն միջամտելու երկրի տնտեսության զարգացմանը կամ մասնակցելու տնտեսական կյանքին: Ֆինանսական աջակցությունը մեծավ մասամբ իրականացվել է երկկողմ ձեւով՝ սփյուռքի գործարարների եւ ՀՀ կառավարության միջեւ:

Սփյուռքի տնտեսության գործուն մասնակիցներին ՀՀ իշխանությունների ընձեռած միակ իրական հնարավորությունը (նվիրատվություններ ոչ կառավարական կազմակերպություններին կամ ուղղակի կառավարությանը եւ աջակցություններ ազգային ձեռնարկություններին) երբեմն «շահամոլական» է որակվել Հայաստանի քաղաքացիական հասարակության ակտիվ գործիչների կողմից: Գործարարությանը եւ զարգացման օժանդակմանը միտված հարաբերությունների այդ եղանակը ի վերջո աստիճանաբար վհատեցրեց սփյուռքի որոշ ներկայացուցիչների: Նրանք այն զգացողությունն ունեցան, որ ՀՀ իրարահաջորդ կառավարությունները չեն ուզում սփյուռքում ապրող եւ ըստ այդմ իրենց վերահսկողությունից դուրս մնացող հայերին մասնակից դարձնել տնտեսական որոշումների ընդունմանը:

Հայկական կոնյակի «Նոյ-Արարատ» ձեռնարկությունը երկրում առավել բարգավաճներից մեկն է: Ձեռնարկությունը մեղադրվեց օտարերկրյա ներդրումների յուրացման մեջ: Ընկերությունն այսօր հայտնի է իր դժվարություններով, որոնք վանում են սփյուռքահայ ներդնողներին:

Հայրենասիրական մղումներով ֆինանսական նշանակալի ջանքեր գործադրած սփյուռքահայ բազմաթիվ ներդնողներ կամաց-կամաց երես թեքեցին: Գաղափարախոսական շարժառիթներով գործելով՝ նրանք բախվեցին կոշտ վարչարարության ստեղծած խոչընդոտներին եւ խոշոր կաշառակերությանը: Տնտեսական պատկառելի միջոցներով օժտված, բայց իշխանություն չունեցող, որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունքից եւ երկիրը բարեփոխելու միջոցներից զրկված օտարերկրացի այդ եռանդուն գործիչներ 2000-ական թվականներին հետզհետե նվազ տեսանելի են դառնում:

## Թուրք-հայկական հարաբերությունները. խոր տարաձայնություններ

Ներքաղաքական հարցերից բացի, սփյուռքահայ տնտեսական ակտիվ գործիչների հետաքրքրությունների եւ ՀՀ պետության գերակայությունների միջեւ գոյացած անդունդը 2008-ից խորացավ նաեւ աշխարհաքաղաքական ոլորտում, որը մինչ այդ միավորում էր ազգի երկու «բեւեռներին»: Իր տարածաշրջանային զարգացման հեռանկարները փակող շրջափակման պատճառով Հայաստանը 2000-ականների կեսերից Թուրքիայի հետ հարաբերություններում ավելի գործնական դիրք բռնեց: Իրոք, թուրք-հայկական սահմանը պաշտոնապես փակ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության սկզբից, որի ընթացքում Անկարան օգնեց Ադրբեջանին ընդդեմ Հայաստանի: Տնտեսապես հզոր երկիր Թուրքիան կկարողանար մատակարարման խոշոր աղբյուր լինել Հայաստանի համար: Մասնավորապես դա զգացվում է «սեւ շուկայում» եւ Վրաստանով կատարվող ներմուծական-արտահանական գործունեությամբ: Մյուս կողմից, հարեւան Թուրքիայի համար Հայաստանը իրացման շատ կարեւոր շուկա է: Քաղաքական այնպիսի հաշտեցումը, որը զանց կառներ Անկարայում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հետ կապված գաղափարախոսական թշնամանքը, կհամապատասխաներ երկու երկրների շահերին:

Ինչպես Անկարայում, այնպես էլ Երեւանում հաշտեցման ջատագովների ձայներ էին հնչել: Ցյուրիխում 2009 թ. հոկտեմբերի 10-ին ստորագրվեցին թուրք-հայկական արձանագրություններ, որոնցում մասնավորապես առկա է երկու երկրների սահմանը բացելու խոստում: Սակայն այդ պարտավորությունները մնացին թղթի վրա, քանի որ գաղափարախոսական հարցերում փոխհամաձայնության հասնելու դժվարությունները ավելի զորեղ են: Այդուհանդերձ խոսքը Հայաստանի պետության՝ հարեւանին ընդառաջ կատարած նշանակալի քայլի մասին է:

Մյուս կողմից, Հայաստանի շրջափակման առաջացրած սոցիալ-տնտեսական դժվարություններին անմիջականորեն չբախվող սփյուռքյան համայնքների մեծամասնությունն ապշեց այդ համաձայնությունից: Սփյուռքահայերը մեծ մասամբ ցեղասպանության զոհերի ժառանգներ են եւ սովորաբար մերժում են «թուրք թշնամու» հետ ամեն մի քննարկում: Ուստի նրանք հիասթափություն ապրեցին, երբ Երեւանը ընդառաջ քայլ արեց, մինչդեռ, նրանց կարծիքով, Հայաստանի պետությունը պարտավոր է հարվածային ուժ լինել հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման եւ հայ ազգի գոյատեւման մղվող ճակատամարտում: Հայաստանի կառավարության պրագմատիստական դիրքորոշումը սփյուռքահայերից շատերը ընկալեցին իբրեւ դավաճանություն: Այդ գործոնը թուլացրեց Հայաստանի պետության եւ հայ ազգի անխզելի կապը:

Հայտնի չէ, թե հայ հասարակության մի մասի ժողովրդավարական ձգտումների, կառավարության արտաքին քաղաքական դիրքորոշումների եւ սփյուռքահայ ներդնողների գաղափարախոսական տեսակետի հարաճուն տարբերությունները արդեն ինչ չափով են բացասաբար ազդել Հայաստանի տնտեսության վրա: Սակայն հաստատ է, որ ընկալման այդ տարբերությունները թե՛ Հայաստանում եւ թե՛ սփյուռքում շատերի կարծիքով սպառնալիք են: Այդ տարաձայնությունները հաղթահարելու համար մի կողմից հարկավոր է, որ ներքին որոշումների ընդունման ոլորտում լրջորեն ներգրավվելուց հետո ներդնողներն առաջվա պես ուզենան մասնակցել երկրի զարգացմանը: Մյուս կողմից անհրաժեշտ կլինի, որ ամենքը համաձայնության գան Հայաստանի հետագա ճանապարհի հարցում. ժողովրդավարացո՞ւմ, թե՞ ավտորիտարիզմ: Թուրքիայի հետ շփումներ եւ Լեռնային Ղարաբաղի հաշտության բանակցությունների եզրափակո՞ւմ, թե՞ ինքնաբավ զարգացման շարունակում:

ՆԻԿՈԼԱ ԼԱՆԴՐՅՈՒ
Ազատ լրագրող
Pages Europe, 25 mars 2013
Ֆրանս. թարգմ. Պ. ՔԵՇԻՇՅԱՆԸ

# Մախաթը պարկում չես թաքցնի

## Ռուսնե՞րն են Ադրբեջանում լավ ապրում, թե՞ ադրբեջանցիները Ռուսաստանում

Ռուս-ադրբեջանական հարաբերությունների սառնությունը տրամաբանորեն արձագանքվում է կողմերի լրատվական դաշտում: Մինչեւ վերջերս այստեղ նախաձեռնողականությունը պատկանում էր Ադրբեջանին: Ինչպես ցույց են տալիս զարգացումները, ռուսաստանյան լրատվամիջոցները որոշել են հակադարձել: Սանկտ Պետերբուրգի repin.info-ն ծավալուն հրապարակում է արել «Ռուսներն Ադրբեջանում եւ ադրբեջանցիներն Ռուսաստանում. ո՞վ է լավ ապրում» խորագրով:

Բաքվի քարոզչամեքենան, բնականաբար, անդրադարձել է դրան: Vesti-az-ի մեկնաբանը փորձել է Ադրբեջանից ռուս բնակչության զանգվածային արտագաղթը «հիմնավորել» 90-ական թվականների «սոցիալ-տնտեսական դժվարություններով»:

Ռուսաստանյան լրատվամիջոցը մինչդեռ բացահայտ գրել է, որ «Ադրբեջանում ռուսները ենթարկվել են ցեղասպանության»՝ նկատել տալով, որ 1990թ. հունվարյան օրերին հայերի հետ ռուսներն էլ ենթարկվել են ջարդի, բռնությունների եւ հալածանքների: Ադրբեջանցի մեկնաբանը ճգնել է հերքել ե՛ւ հայերի, ե՛ւ ռուսների դեմ բռնությունների, զանգվածային սպանությունների եւ բռնատեղահանության փաստերը, սակայն ոչ մի աղբյուր, ոչ մի վկայություն չի բերել:

Հասկանալի է՝ չէր էլ կարող, ոչ ոք չի վկայի այն, ինչ չի եղել: Դրա փոխարեն նա հռետորական հարց է հնչեցրել. «Չէ՞ որ ադրբեջանցիների հետ ուսուսի նաեւ ռուսներն են կռվել ղարաբաղյան պատերազմում եւ արժանացել ազգային հերոսի կոչման»: Այո, Ադրբեջանի ազգային հերոսների թվում կան նաեւ սլավոնական ծագման անձինք: Բայց... նրանք Ադրբեջանի քաղաքացի չեն: Ստացվում է, որ Ադրբեջանը ազգային հերոսի կոչման է արժանացրել... վարձկանների:

Բայց վերադառնանք Ադրբեջանի ռուս բնակչության թեմային: Խորհրդային 1926 թ. մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանի քաղաքային բնակչության 26,6 տոկոսը կազմել են ռուսները: Արդեն 1939-ին այդ ցուցանիշը 35,7 տոկոս էր: Թվային արտահայտությամբ պատկերը հետեւյալն է. 1926-ին Ադրբեջանում ապրել է 220 545, 1939-ին՝ 528 318, 1959 501 282 , 1970-ին՝ 510 059, 1979-ին՝ 475 255, 1989-ին՝ 392 304, 1999-ին՝ 141 700, 2009 119 300 ռուս (տես՝ /www. ru.wikipedia. org):

Սրանք պաշտոնական վիճակագրության տվյալներն են: Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանում ռուս բնակչությունը 1970թ. սկսած անշեղորեն նվազել է: Հայտնագործություն արած չենք լինի, եթե ասենք, որ դա պայմանավորված էր Հեյդար Ալիեւի իշխանության գալով: Հենց նրա օրոք են Բաքվում եւ այլ քաղաքներում զբաղեցրած պաշտոններից զանգվածաբար ազատվել ռուս, հայ եւ այլազգի տնօրենները, շրջկոմի քարտուղարները, շրջխորհրդի գործկոմի նախագահները:

Սա քաղաքականություն է, որ սկսել էր 1950-ական թվականների երկրորդ կեսին: Պահպանվել է վկայություն, որ 1959թ. հուլիսի 1-ին ԽՄԿԿ Կենտկոմի Նախագահությունում քննարկվել է Ադրբեջանի կուսակցական ղեկավարության հարցը: Ստուգման առթիվ «Տեղեկանք»-ում պարզ նշված է, որ այլազգիներն ազատվում են աշխատանքից: Մեջբերված է Ադր.ԽՍՀ ԳԽ նախագահության նախագահի գրող Միրզա Իբրահիմովի խոսքը. «Հիմա 20-ական թվականները չեն, մենք ունենք մեր ազգային կադրերը»: Արձանագրված է Նիկիտա Խրուշչեւի զարմացական ռեպլիկը. «Եվ այդպես խոսողը կոմունի՞ստ է»:

Խնդիրն այնքան սուր է դրվել, որ մի քանի օր անց Բաքվում հրավիրված պլենումում աշխատանքից ազատվել է Ադր. ԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար Իմամ Մուստաֆաեւը: Բայց, ինչպես վիճակագրությունն է վկայում, իրավիճակը չի փոխվել, ավելի է խորացել: Բրեժնեւյան կառավարման տարիներին՝ հատկապես, ինչը Հեյդար Ալիեւի պաշտոնական կենսագիրները չեն էլ թաքցնում. այսօր նա պաշտոնապես հռչակված է «դեռեւս ԽՍՀՄ գոյության տարիներին Ադրբեջանի անկախության կերտման հիմնադիր»: Իսկ առանց ռուս, ռուսախոս բնակչությանը պետական կառավարումից եւ հանրային-կուսակցական կյանքից օտարելու անհնար էր Ադրբեջանի անկախության «հիմնաքարը դնել»:

Իրականությունն արտացոլված է պաշտոնական վիճակագրության տվյալներում: Կարեւոր չէ, որ Ադրբեջանի Միլլի մեջլիսում մի ցուցանակային ռուս պատգամավոր կա՝ Միխաիլ Զաբելին: Դա տուրք է վերջինիս նվիրվածությանն առ Հեյդար Ալիեւ. Զաբելինը 1993-ի հունիսին մեկն էր այն մարդկանցից, որ «բաց նամակով» դիմել էր «նահապետին» եւ խնդրել, որ «վերադառնա եւ Ադրբեջանը փրկի կործանումից»:

Ցանկության դեպքում կարելի է գտնել եւս մեկին: Փաստն այն է, որ 500 000 ռուս բնակչությունից Ադրբեջանում այսօր մնացել է հազիվ 60-70 000, գերազանցապես՝ ծեր եւ անօգնական մարդիկ, որ, կոպիտ ասած, գնալու տեղ չունեն: Եվս 5-10 տարի, եւ Ադրբեջանում ոչ մի ռուս այլեւս չի լինի: Իսկ Ռուսաստանում ապրում, աշխատում եւ հարազատներին ապրեցնում է 2-3 մլն ադրբեջանցի: Այս ճշմարտությունն է արձանագրել ռուսաստանյան լրատվամիջոցը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# ՆԱՏՕ-ի օդուժի հարվածից 10 աֆղան երեխա է զոհվել

Աֆղանստանի արեւելքում՝ Կունարի նահանգում կիրակի օրը ՆԱՏՕ-ի ռազմօդանավերի գրոհի ժամանակ 10 երեխա է զոհվել: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով նահանգի կառավարության ներկայացուցչուհի Վասիֆուլլահ Վասիֆիին:

Ողբերգական դեպքը տեղի է ունեցել Շայգալ Վա Շինքանի շրջանում ՆԱՏՕ-ի զորքերի եւ Աֆղանստանի կառավարական ուժերի համատեղ ռազմական գործողության ժամանակ: Գործողության հրամանատարությունը օդուժի օգնությունն էր խնդրել «Թալիբան» իսլամիստական շարժման մարտիկների գրոհից հետո, երբ սպանվել էր մեկ ամերիկացի զինծառայող եւ վիրավորվել էին մի քանի աֆղան զինվորներ:

Վասիֆիի խոսքերով, ՆԱՏՕ-ի օդուժի հարվածից, 10 երեխաներից բացի, սպանվել է «Թալիբան» շարժման 8 գրոհային, ինչպես նաեւ վիրավորվել է 6 կին: Շայգալ Վա Շինքանի վարչակազմի ղեկավար Աբդուլ Զահիրը հաստատել է զոհերի վերաբերյալ Վասիֆիի հրապարակած տվյալները, սակայն այդ շրջանում անվտանգության ուժերի ղեկավար Սայեդ Ռահմանը պնդում է, որ 6 կանանցի մեկը զոհվել է:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ի ներկայացուցչին, նա պնդում է, թե օդուժի հարվածից ընդհանուր առմամբ վիրավորվել են մեկ տասնյակ կին ու երեխա, բայց չեն զոհվել: Ավելի վաղ՝ 2013-ի փետրվարին նույն տարածաշրջանում ՆԱՏՕ-ի օդուժի հարվածներից դարձյալ զոհվել էին խաղաղ բնակիչներ, այդ թվում՝ 5 երեխա: Խաղաղ բնակիչների զոհվելը հարուցում է զանգվածային դժգոհություն ՆԱՏՕ-ի ուժերից, որոնք 2001 թվականից կռվում են թալիբների դեմ: Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայը վերջին միջադեպի կապակցությամբ խստիվ քննադատել է ՆԱՏՕ-ի կոալիցիոն ուժերին:

# Սիրիացի ապստամբների եւ «Հզբոլլահի» մարտեր Հոմսի նահանգում

Սիրիական ընդդիմության ներկայացուցիչները հաղորդում են, որ Հոմսի նահանգի տարածքում ապստամբները ծանր մարտեր են ծավալել նախագահ Բաշար Ասադին պաշտպանող լիբանանյան «Հզբոլլահ» խմբավորման գրոհայինների դեմ:

Արդեն մի քանի օր շարունակվող մարտերի ընթացքում երկու կողմերն էլ զգալի կորուստներ են կրել. կան սպանվածներ եւ վիրավորներ:

Լոնդոնում արաբերեն լույս տեսնող «Աշ Շարք ալ Աուսաթ» թերթը տեղեկացնում է, որ Բեյրութում շիաների արվարձանի հիվանդանոց են բերվել «Հզբոլլահի» երկու տասնյակ վիրավոր գրոհայիններ, ինչպես նաեւ զգալի թվով դիակներ: Բարձրախոսներով հանդերձավորված «Հզբոլլահի» ավտոմեքենաները արվարձանում շրջելով՝ բնակիչներին կոչ են արել արյուն տալ վիրավորներին:

Սիրիացի ապստամբների պնդման համաձայն, «Հզբոլլահի» գրոհայինները իրենց գործողությունները համակարգում են Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի իրանցի պատվիրակների եւ Բաշար Ասադի բանակի հրամանատարության հետ:

ԿԱՀԻՐԵ

# «Ղպտիական ջարդեր» Եգիպտոսում

## Նախագահը կարգադրեց ուժեղացնել մայր տաճարի պաշտպանությունը



**Եգիպտոսի նախագահ Մուհամմեդ Մուրսին երեկ առավոտյան հեռախոսազրույց է ունեցել Ղպտիական ուղղափառ եկեղեցու պատրիարք Թեոդորոս Բ-ի հետ: «Ալ Ահրամ» էլեկտրոնային հրատարակությունը հաղորդում է, որ Մուրսին նաեւ կարգադրել է Կահիրեում ուժեղացնել ղպտիների Սուրբ Մարկոս մայր տաճարի պաշտպանությունը, որտեղ ապրիլի 7-ի երեկոյան քրիստոնյա ղպտիների վրա մահմեդականների հարձակման ժամանակ 1 մարդ սպանվել էր, 84-ը տարբեր վնասվածքներ էին ստացել:**

**«Մայր տաճարի վրա ամեն մի հարձակում ուղղված է անձամբ իմ դեմ», ասել է Մուրսին, ընդգծելով, որ պետությունը պատասխանատու է ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդականների անվտանգության համար:**

**Միջդավանանքային բախումները Կահիրեում վերսկսվեցին ապրիլի 6-ին, երբ Սուրբ Մարկոս մայր տաճարի մոտ կատարվում էր նախօրեին Կահիրեի արվարձան Կալյուբիայում դաժան բախումների հետեւանքով սպանված 4 ղպտիների հոգեհանգստյան արարողությունը: Այն ժամանակ մի խումբ ղպտի երեխաներ իսլամական աստվածաբանական կենտրոնի շենքերից մեկի պատի վրա խզբզել էին խաչանման պատկերներ, ինչը սաստիկ զայրացրել էր մահմեդականներին: Ընդհարման հետեւանքով սպանվել էին 4 քրիստոնյա եւ 1 մահմեդական:**

**Ապրիլի 7-ին քրիստոնյա զոհերի հուղարկավորությունը հանգեցրեց նոր բախումների: Տաճարից դուրս եկած ղպտի երիտասարդները սկսեցին քարկոծել ոստիկաններին, որոնք պատասխանեցին արտասավաբեր գազով: Շրջակայքի մահմեդականները, առիթից օգտվելով՝ հարձակվեցին ղպտիների վրա:**

**Կահիրեի քրիստոնեաբնակ թաղամասերում իրադրությունը մնում է լարված, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Ղպտիական ուղղափառ եկեղեցու պատրիարք Թեոդորոս Բ-ն հավատացյալներին կոչ է արել դադարեցնել բռնարարքները եւ հանդես բերել զսպվածություն:**

**Կահիրեի դեպքերի կապակցությամբ «Մուսուլման եղբայրներ» կառավարող կուսակցությունը իր ընդդիմախոսներին մեղադրել է «քաոս տարածելու» փորձերի մեջ, մինչդեռ ընդդիմության ներկայացուցիչները բախումները համարել են քաղաքացիներին պաշտպանելու պետության անկարողության վկայություն եւ պահանջել են երկրի նախագահի ու կառավարության հրաժարականները:**

**Քրիստոնյաները կազմում են Եգիպտոսի բնակչության մոտ 10 տոկոսը: Ֆրանսպրեսը նշում է, որ միջդավանանքային հողի վրա բախումները հաճախակի են դարձել 2011-ի փետրվարին նախկին նախագահ Հոսնի Մուբարաքի տապալումից հետո: Գործակալության տվյալներով, վերջին երկու տարիներին ընդհարումների հետեւանքով սպանվել են 50 քրիստոնյա ղպտիներ եւ մի քանի մահմեդական:**

# Վախճանվել է Մարգարետ Թետչերը



**Մեծ Բրիտանիայում մահացել է երկրի նախկին վարչապետ Մարգարետ Թետչերը: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ «Երկաթյա տիկինը» 87 տարեկան էր:**

**Հանգուցյալի մամլո քարտուղարը Թետչերի որդուն եւ դստերը վկայակոչելով «Սքայ նյուզ» հեռուստաալիքին հայտնել է, որ Մարգարետ Թետչերը մահացել է ապրիլի 8-ի առավոտյան, ուղեղի կաթվածից: Վերջին տարիներին նա տառապում էր Ալցհայմերի հիվանդությունից:**

**Բարոնուհի Թետչերը Մեծ Բրիտանիայի 71-րդ վարչապետն էր եւ միակ կին վարչապետը: Այդ պաշտոնը նա զբաղեցնում էր 1979-1990 թթ.:**

**2002 թվականից Թետչերի առողջական վիճակը վատացավ, եւ նա աստիճանաբար թողեց հասարակական-քաղաքական գործունեությունը: Տասը տարի առաջ նա տարավ մի շարք փոքր ինսուլտներ, եւ բժիշկները խորհուրդ տվեցին դադարեցնել հրապարակային ելույթները, հիշեցնում է BBC-ն:**

**Նախկին վարչապետի դուստր Քերոլ Թետչերը 2008-ին լույս ընծայած գրքում պատմում է ծերունական տկարամտության դեմ իր մոր մղած պայքարի մասին:**

**Պ. Ք.**

# Արսեն Մեհրաբյանը կբեմադրի «Պատանի պարողների Եվրոտեսիլի» մեր ներկայացուցչի պարը

*«Պատանի պարողների Եվրոտեսիլ» միջազգային մրցույթի հայաստանյան ներկայացուցչի՝ Վահագն Մարգարյանի պարը կբեմադրի Արսեն Մեհրաբյանը:*

*Նա սովորել է Հայաստանի ազգային բալետի դպրոցում, իսկ հետո ուսումը շարունակել է Համբուրգի բալետի դպրոցում՝ ուսանելով Ջոն Նոյմայերի մոտ: 2000թ. ընդունվել է համբուրգյան բալետի կազմակերպություն եւ արդեն 2002թ. դարձել մենակատար: Հետագայում ընդունվել է Ցյուրիխի բալետ՝ որպես գլխավոր մենակատար, ապա միացել է Շվեդիայի թագավորական բալետին՝ որպես գլխավոր մենակատար: Արժանացել է «Ամադեուս» բալետի մրցույթի ոսկե մեդալի, միջազգային բալետի մրցույթի Prix-de-Lausanne եւ Վագանովի միջազգային բալետի մրցույթի 3-րդ մրցանակներին, Վառնայի միջազգային բալետի մրցույթի գրան պրիի, Համբուրգի դոկտոր Վիլհելմ Օբերդորֆերի մրցանակին, իսկ Նագոյա միջազգային բալետի մրցույթում ժյուրիի հատուկ մրցանակին: Որպես մենակատար հանդես է եկել հետեւյալ դերերով՝ Սոլոր, Բրոնզե Կուռք՝ «Բայադերա», Բենվոլիո՝ «Ռոմեո եւ Ջուլիետ», Կոլար՝ «Շելկունչիկ», Դիմոտրոս՝ «Ամառային գիշերվա երազ», Գաստոն՝ «Կամելիազարդ տիկինը», Ամոր Սեգեն՝ «Քնած դշխուհին», Տելեմակ՝ «Ոդիսեւս», Իվան Ցարեւիչ՝ «Կրակի թռչուն», Շոպեն՝ «Նոկտյուրն», Ռոտբարտ՝ «Կարապի լիճ», եւ այլն: Հյուրախաղերով հանդես է եկել մի շարք երկրներում, մասնակցել փառատոների ու մրցույթների Լատվիայում, Իտալիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Չեխիայում, Ուրուգվայում, Շվեյցարիայում եւ այլուր:*

*«**Ազգը**» զրուցեց **Արսեն Մեհրաբյանի** հետ:*



**- Սա հայաստանյան Ձեր առաջի՞ն բեմադրությո՞ւնն է:**

- Ոչ, առաջինը չէ: Բեմադրություններ կատարել եմ Բարեկամություն պարի անսամբլում եւ մի շարք այլ խմբերում:

**- Իսկ ո՞ր ստեղծագործության հիման վրա կլինի Ձեր բեմադրությունը:**

- Երաժշտության հեղինակը իմ լավ ընկերն է՝ Օտտո Բուբենիչեկը, որը Համբուրգ թատրոնի մենակատար-պարողն է: Նա նաեւ կոմպոզիտոր է եւ գրում է ստեղծագործություններ ժամանակակից բալետների համար: Հայաստանյան ներկայացուցչի համար գրված ստեղծագործության մեջ կլինեն նաեւ հայկական տարրեր:

**- Պարողների Եվրոտեսիլի եզրափակիչ փուլում մասնակիցը իմպրովիզիացոն համարով պետք է հանդես գա: Որքանո՞վ մեր մասնակիցը լավ կկարողանա ներկայանալ այդ փուլում:**

- Եթե անկեղծ ասեմ, ապա մի քիչ դժվար մրցույթ է լինելու մեր մասնակցի համար, քանի որ մյուս մրցույթները դասական են, որոնք հեշտ են մեր պարողների համար: Իսկ սա ժամանակակից է, եւ քանի որ ժամանակակից բալետի ոճն այդքան էլ զարգացած չէ Երեւանում, դժվար կլինի նրա համար: Բայց կաշխատենք եւ ամեն ինչ կանենք, որ կարողանա լավ ներկայանալ:Վահագնը շատ տաղանդավոր երիտասարդ է, սակայն դեռ շատ բաներ կան հղկելու:

**- Արդյոք ցանկություն չունե՞ք վերադառնալու Հայաստան եւ այստեղ ստեղծելու եւ զարգացնելու դասական բալետը:**

- Դա միայնակ ես չեմ կարող անել: Պետք է մասնագետներ գան Եվրոպայից:

«Պատանի պարողների եվրոտեսիլ» միջազգային մրցույթի հայաստանյան պատվիրակության նախագահ **Գոհար Գասպարյանն «Ազգի»** հետ զրույցում բացատրեց, թե ինչպես է տեղի ունեցել բեմադրիչի ընտրությունը. «Ուսումնասիրելով դաշտը, լսելով տարբեր կարծիքներ՝ հասկացա, որ փայլուն դասական պարողներ ունենք, սակայն մոդեռն բալետի դպրոցում մի փոքր թերանում ենք: Իսկ այդ մրցույթում ավելի շատ հենց մոդեռն բալետ է ներկայացվում, այդ իսկ պատճառով Հանրային հեռուստաընկերության հետ որոշեցինք արտասահմանից հրավիրել մեր հայրենակցին՝ Արսեն Մեհրաբյանին, ավելի լավ տարբերակ չէր կարող լինել: Առաջինը՝ նա շատ լավ մասնագետ է եւ ինքն է կրողն այդ ամենի, պարում է ե՛ւ դասական, ե՛ւ ժամանակակակից ու կատարում է բեմադրություններ ժամանակակից բալետի գծով: Բազմաթիվ մրցույթների դափնեկիր է, որն արդեն ասում է, որ նա գիտի, թե ինչ է հարկավոր մրցույթում հաղթելու համար»:

«Պատանի պարողների Եվրոտեսիլ» մրցույթը տեղի կունենա հունիսի 14-ին Լեհաստանի Գդանսկ քաղաքում:

Նշենք, որ «Պատանի պարողների Եվրոտեսիլին» մասնակիցներն առաջին փուլում պետք է հանդես գան մենապարով, իսկ երկրորդում՝ խմբային պարով: Խմբայինի համար հատուկ մասնագետ է հրավիրվում, որն այս տարի կլինի Մեծ Բրիտանիայից՝ Հուդ Բելիբոլսնը: Իսկ վերջին փուլում, երբ ընտրում են եզրափակիչ դուրս եկած երկու մասնակիցներից հաղթողին, ապա նրանք պետք է հանդես գան իմպրովիզացիոն պարով՝ ցույց տալով իրենց հմտությունները: Ահա այս փուլից հետո կընտրվի հաղթողն ու երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այս տարի Եվրոտեսիլին կմասնակցի տասը պետություն՝ Բելառուս, Ուկրաինա, Հայաստան, Նորվեգիա, Շվեդիա, Նիդեռլանդներ, Գերմանիա, Չեխիա, Սլովենիա եւ հյուրընկալող երկիրը՝ Լեհաստանը:

«Պատանի պարողների Եվրոտեսիլին» առաջին անգամ տեղի է ունեցել 1985 թվականին Իտալիայում, որն անցկացվում է երկու տարին մեկ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Հնդկաստանի առեղծվածային անդրադարձումները

Ապրիլի 10-ին՝ ժամը 17.30-ին Հայաստանի նկարիչների միությունում կբացվի հայ նկարիչների գեղանկարների ցուցահանդեսը «Հնդկաստանի առեղծվածային անդրադարձումները» խորագրով: Ցուցադրվելու են Անատոլի Ավետյանի, Վարդան Ավետյանի, Սուրեն Խորենյանի եւ Վլադիմիր Սիմոնյանի ստեղծագործությունները: Ցուցահանդեսը նվիրվում է Հայաստանի ու Հնդկաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին, որը լրացավ անցյալ տարի, եւ ցուցահանդեսը, որը բաց կլինի մինչեւ ապրիլի 18-ը, կազմակերպվում է Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ եւ ներկայացվում է Երեւանում Հնդկաստանի դեսպանության եւ Նյու Դելիի մշակութային կապերի հնդկական խորհրդի կողմից:



Նկարիչների միությունում նույն օրը տեղի կունենա նաեւ հնդկական «Ռամայանա» էպոսի հայերեն թարգմանության շնորհանդեսը:

Ի. Պ.

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

# Համերգ Ստրասբուրգում

**Ապրիլի 6-ին Ստրասբուրգի քաղաքային երաժշտության դահլիճում ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության հովանու ներքո տեղի ունեցավ «AMALGAMME» ֆրանս-գերմանական նվագախմբի կազմակերպած բարեգործական համերգը, որի ողջ հասույթն ուղղվելու է Հայաստանում եւ Ֆրանսիայում սահմանափակ կարողությունների տեր երեխաներին:**

**Համերգին բացման խոսքով հանդես եկավ Արմեն Պապիկյանը: ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը շնորհակալություն հայտնեց Ստրասբուրգի ֆիլհարմոնիկ, Բադեն-Բադենի եւ Ֆրայբուրգի սիմֆոնիկ նվագախմբերին, ինչպես նաեւ Ստրասբուրգի իշխանություններին՝ համերգի կազմակերպման գործում ցուցաբերած եւ մարդասիրական այս ակցիային ակտիվ եւ հետեւողական մասնակցության համար:**

**Հայ անվանի դիրիժոր Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ հնչեցին Մոցարտի, Դվորժակի, Ելգարի, Էդվարդ Միրզոյանի եւ Կոմիտասի ստեղծագործությունները: Համերգին ներկա էին ԵԽ-ում հավատարմագրված դեսպաններ եւ հայ համայնքի ներկայացուցիչներ: Համերգին իր մասնակցությունը բերեց հայտնի դաշնակահար Իգոր Չետուեւը:**

# Լեւոն Խեչոյանի «Խնկի ծառեր» գրքի շնորհանդեսը Կիեւում



**2013 թվականի մարտին Կիեւի «Е» գրախանութում տեղի ունեցավ հայ անվանի գրող Լեւոն Խեչոյանի «Խնկի ծառեր» գրքի շնորհանդեսը: Այն տպագրել է Լվովի «Սրիբնե սլովո» հրատարակչությունը՝ ՀՀ մշակույթի նախարարության «Համատեղ ծրագրեր» շրջանակում՝ նվիրված Հայ գրատպության 500-ամյակին:**

**Ուկրաինայում Հայ գրատպության 500-ամյակին նվիրված հոբելյանի ավարտը նշանավորվեց Լեւոն Խեչոյանի «Խնկի ծառեր» գրքով: Հայ եւ ուկրաինական գրականությունների համար այդ հիշարժան իրադարձությունը հետաքրքրական քննարկումների առիթ դարձավ, եղան մի շարք հրապարակումներ: Գիրքը թարգմանել է Անուշավան Մեսրոպյանը, խմբագրել է բանաստեղծ Իրինա Ստարովոյտը, ձեւավորել նկարիչ-գրաֆիկ Լեսյա Կվիկը:**

**Շնորհանդեսի ժամանակ հայ գրողին եւ նրա ստեղծագործությունները ներկայացրին թարգմանիչ Անուշավան Մեսրոպյանը, հրատարակիչ Իրինա Լոնկեւիչը, գրականագետ Օլենա Հալետան: Ելույթ ունեցան ՀՀ-ում Ուկրաինայի առաջին դեսպան, թարգմանիչ Օլեքսանդր Բոժկոն, ժամանակակից ուկրաինացի բանաստեղծուհի Լյուդմիլա Տարանը, անվանի էսսեիստ Անատոլի Դնեստրովսկին, կինոյի եւ թատրոնի դերասան Տարաս Ժիրկոն: Շնորհանդեսին ներկա էին նաեւ ուկրաինացի հայտնի բանաստեղծ, պետական եւ հասարակական գործիչ, Ուկրաինայի հերոս Իվան Դրաչը, Ուկրաինայում ՀՀ դեսպանատան դեսպանորդ Ջիվան Մովսիսյանը, «Վսեսվիտ» ամսագրի գլխավոր խմբագիր Օլեգ Միկիտենկոն, գրողներ Գրիգորի Կրիմչուկն ու Սերգեյ Ցուշկոն, Կիեւի հայ համայնքի ներկայացուցիչներ:**

**Լեւոն Խեչոյանը ութսունականների սերնդից է: Մասնակցել է Լեռնային Ղարաբաղի պատերազմին: Գրողի ստեղծագործության գլխավոր թեմաներն են պատերազմը, առօրյա դաժան կյանքը հեռավոր լեռնաշխարհում, հայոց պատմության ողբերգական էջերը:**

**«Խնկի ծառերը» գրողի ստեղծագործության ընտրանին է, որին բնորոշ է խիստ լարվածությունը, խոսքի սեղմությունը եւ կյանքի սահմանաբաժանին հայտնված մարդու հոգեբանության վերարտահայտումները: «Մարդկային պարադոքսի ողջ խորությունը խտացված է ժլատ, ճիշտ ընտրված բառերի մեջ՝ ցույց տալու, թե ինչպես պետք է անցնել «երկրային դժոխքի ոլորաններով ու անեղծ մնալ»: Խեչոյանի հերոսները մարդիկ են, որոնք ողբերգական 20-րդ դարի՝ երջանիկ ու դժբախտ ճակատագրի որոգայթներում են, հանուն սիրո, հանուն կորուսյալ երազանքների: Այս գրքում փշուր առ փշուր վերակենդանացող հիշողություններով լի պատմություններ են»,- գրված է գրքի առաջաբանում:**

ՍԱՄՎԵԼ ԱՋԻՋՅԱՆ
Կիեւ

# Նոր կրթական ծրագիր Գաֆեսճյան արվեստի կենտրոնում

**Այսօր ժամը 14:00-ին Գաֆեսճյան արվեստի կենտրոնում մեկնարկում է «Ստեղծիր քո պատմությունը» նոր կրթական ծրագիրը՝ նախատեսված ընտանիքների եւ դպրոցականների համար:**

**Ծրագիրն իրականացվում է «Հակոբ Հակոբյան. երկաթե երկեր» ցուցահանդեսի շրջանակներում: Ծրագրի առաջին մասում մասնակիցները շրջայց կունենան «Արծիվ» սրահում: Նրանք կծանոթանան Հակոբ Հակոբյանի ստեղծագործություններին եւ նրա քանդակների ստեղծման հիմնական գաղափարներին:**

**Ծրագրի երկրորդ մասը կշարունակվի կենտրոնի Ստեղծագործական սրահում: Մասնակիցները հատուկ արկղի մեջ կտեղավորեն իրենց հետ կենտրոն բերած տարատեսակ առարկաները: Յուրաքանչյուրը կընտրի իր նախընտրած առարկան, որը հակոբյանական սկզբունքով կվերածվի մարդակերպ կամ կենդանակերպ ֆիգուրի:**

**Ծրագիրը բացահայտում է՝ ինչպես հասարակ առարկաները կարող են վերածվել ֆիգուրների՝ զարգացնելով երեխաների երեւակայությունը, եւ հրաշալի առիթ է վայելելու ստեղծագործական մթնոլորտը»,- մեկնաբանեց Գաֆեսճյան արվեստի կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահագն Մարաբյանը:**

**Ծրագրին մասնակցությունն անվճար է, պարտադիր նախնական գրանցմամբ: Տեղեկությունների եւ գրանցումների համար զանգահարել՝ +37410 54 19 32/34:**

# Մարզական

## Մխիթարյանը մոտ է արդյունավետության ռեկորդը գերազանցելուն

Հենրիխ Մխիթարյանի խփած 2 գոլերը 2-1 հաշվով հաղթանակ պարգեւեցին «Շախտյորին» Կիեւի «Դինամոյի» հետ կայացած Ուկրաինայի առաջնության սկզբունքային խաղում: Հենրիխն ավելի ամրապնդեց Ուկրաինայի առաջնության լավագույն ռմբարկուի իր դիրքը՝ գոլերի թիվը հասցնելով 21-ի: Նա կրկնեց «Շախտյորի» մեկ մրցաշրջանի արդյունավետության ռեկորդը, որը պատկանում էր թիմի նախկին խաղացողներ Օլեգ Մատվեեւին (1996/97) եւ Անդրեյ Վորոբեյին (2000/01): Իսկ Ուկրաինայի առաջնություններում մեկ մրցաշրջանի արդյունավետության ռեկորդը կրկնելու համար Մխիթարյանին անհրաժեշտ է մնացած 7 հանդիպումներում ընդամենը մեկ գոլ խփել: Ռեկորդային ցուցանիշը պատկանում է Կիեւի «Դինամոյի» նախկին ֆուտբոլիստներ Սերգեյ Ռեբրովին (1997/98) եւ Մաքսիմ Շացկիխին (2002/03), որոնք մեկ մրցաշրջանում 22-ական գոլի հեղինակ են դարձել:



Խաղից հետո Մխիթարյանն իր տպավորություններն է հայտնել. «Մեզ համար գլխավորը հաղթելն էր: Թեեւ արագ գոլ բաց թողեցինք, սակայն դրանից հետո լավ խաղացինք: Մենք գոլային մի քանի պահեր չիրացրինք:

Թիմակիցներիս շնորհավորում եմ հաղթանակի առթիվ, քանի որ այն ձեռք բերվեց դժվարին խաղում: Գիտեինք, որ մեզ շատ լուրջ հանդիպում է սպասում, որ փոքր սխալի դեպքում կարող ենք գոլ ընդունել սեփական դարպասը: Թեեւ դինամոյականներից միավորների զգալի առավելությանը, լրջորեն էինք տրամադրվել այս խաղին: Մարզիչը մեզ լավ էր նախապատրաստել»:

## Առաջատարների մրցավեճը կրկին տպավորություն չթողեց

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 36-րդ տուրում ուշադրության կենտրոնում չեմպիոնի տիտղոսի 2 հավակնորդներ «Միկայի» եւ «Շիրակի» մրցավեճն էր: Այդ խաղում հաղթանակի գինը չափազանց բարձր էր: «Շիրակի» հաղթանակի դեպքում գյումրեցիները գործնականում կապահովեին ոսկե մեդալները՝ «Միկայից» միավորների տարբերությունը հասցնելով 7-ի: Իսկ եթե հաղթեր «Միկան», ապա միավորների տարբերությունը կհասներ նվազագույնի ու պայքարը չեմպիոնի տիտղոսի համար չափազանց կսրվեր:

Մրցակիցներն ընդամենը 4 օր առաջ նույն «Միկա» մարզադաշտում գավաթի կիսաեզրափակիչ առաջին հանդիպումն էին անցկացրել: Դժգույն այդ խաղում «Շիրակը» հաղթել էր 1-0 հաշվով:




Առաջնության հանդիպումն էլ էականորեն չտարբերվեց գավաթային մրցավեճից: Դաժյալ ֆուտբոլասերներն ականատես եղան դժգույն խաղի, որում 2 թիմերի ֆուտբոլիստներն էլ գործում էին սխալներով: Եթե «Շիրակին» ձեռնտու էր նույնիսկ ոչ-ոքին, ապա «Միկային» մրցաշարային իրավիճակը ստիպում էր ակտիվ խաղ ցուցադրել հաղթանակի հասնելու համար: Սակայն «Միկայի» գործողություններում այս անգամ էլ հստակությունը պակասում էր: Այդպես էլ դարպասի գրավում չարձանագրվեց: Հաղթանակին ավելի մոտ էր «Շիրակը», սակայն Լամին Լի Յորոն նպաստավոր դիրքից վրիպեց: «Շիրակը» պահպանեց 4 միավորի առավելությունը եւ շարունակում է հավակնել ոսկե մեդալներին:

Պայքարը թեժացավ բրոնզե մեդալների համար: «Փյունիկը», որ գարնանը 3 անընդմեջ հաղթանակ էր տոնել առաջնությունում, չկարողացավ շարունակել հաղթարշավը: Աբովյանում թեեւ «Փյունիկն» առաջինը գրավեց «Ուլիսի» դարպասը, բայց Սարգիս Բալոյանի խփած գոլը հաղթական չդարձավ: 2-րդ խաղակեսում նախկին փյունիկցի Արտակ Անդրիկյանն «Ուլիսին» փրկեց պարտությունից՝ 1-1:

Միավորների կորուստ ունեցավ նաեւ բրոնզե մեդալների մյուս հավակնորդ Կապանի «Գանձասարը»: Աբովյանում արարատցիները շատ հաջող անցկացրին հանդիպումը: Առաջին խաղակեսում Խորեն Վերանյանն առաջ մղեց արարատցիներին, իսկ ընդմիջումից քիչ անց Գեւորգ Նռանյանը կրկնապատկեց հաշիվը: Հյուրերին հաջողվեց միայն կրճատել հաշիվը՝ 2-1: Աչքի ընկավ թիմի լեգենդական Ուիլյամ Պոտակերը:

«Արարատը» շատ կարեւոր հաղթանակ տոնեց եւ վերջապես հեռացավ 8-րդ հորիզոնականից: Վերջին տեղում հայտնվեց «Բանանցը», որն Արարատում 0-1 հաշվով զիջեց «Իմպուլսին»: Միակ գոլի հեղինակը Նորայր Գյոզալյանն էր, որին վերջապես հաջողվեց բացել գոլերի հաշիվն առաջնության գարնանային հատվածում: Այդ հաղթանակի շնորհիվ «Իմպուլսն» ընդհուպ մոտեցավ «Փյունիկին» ու «Գանձասարին»:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շիրակ | 36 | 22 | 8 | 6 | 60-35 | 74 |
| 2. Միկա | 36 | 21 | 7 | 8 | 52-36 | 70 |
| 3. Փյունիկ | 36 | 17 | 5 | 14 | 60-47 | 56 |
| 4. Գանձասար | 36 | 15 | 10 | 11 | 40-32 | 55 |
| 5. Իմպուլս | 36 | 16 | 6 | 14 | 61-55 | 54 |
| 6. Ուլիս | 36 | 9 | 10 | 17 | 35-46 | 37 |
| 7. Արարատ | 36 | 8 | 4 | 24 | 24-61 | 28 |
| 8. Բանանց | 36 | 4 | 14 | 18 | 33-53 | 26 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 21 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 14 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 14 |
| Լամին Լի Յորո | «Շիրակ» | 13 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 12 |
| Վիուլեն Այվազյան | «Փյունիկ» | 11 |
| Արսեն Բալաբեկյան | «Ուլիս» | 10 |
| Կամո Հովհաննիսյան | «Փյունիկ» | 10 |

## Հայ շախմատիստներից հինգը հաղթանակով մեկնարկեց

Դուբայում մեկնարկած շեյխի գավաթի 15-րդ մրցաշարում Հայաստանը ներկայացնում են 6 շախմատիստներ: Մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունեցող Վլադիմիր Հակոբյանը մեկնարկային տուրում հաղթեց սուդանցի Սամիր Նադիրին: Հաղթանակով մեկնարկեց նաեւ Գաբրիել Սարգսյանը՝ պարտության մատնելով գերմանացի Յադե Շմիդտին: Տիգրան Պետրոսյանն առավելության հասավ գերմանացի Բիրգեր Վենզելի նկատմամբ, իսկ Լիլիթ Գալոյանը հաղթեց Սամյուկթա Հարիկրիշնային: Հաջող էր նաեւ Հովիկ Հայրապետյանի մեկնարկը, որն իր օգտին մեկ միավոր գրանցեց ԱՄԷ-ի ներկայացուցիչ Մայեդ Ալ Ռաշեդիի հետ պարտիայում: Միայն Մարկ Բասենցյանի ելույթն էր անհաջող, որը պարտվեց չեխ Վիկտոր Լազնիչկային:

Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 50 հազար դոլար է: Հաղթողը կստանա 10 հազար դոլար, 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրները՝ համապատասխանաբար 7 եւ 4 հազար դոլար: Մրցաշարին մասնակցում են 196 շախմատիստներ:

ՉՅՈՒԴՈ

## 3 հայ ձյուդոյիստներ բրոնզե մեդալ նվաճեցին

Հունաստանի Սալոնիկ եւ Ռուսաստանի Տվեր քաղաքներում զուգահեռաբար անցկացվում են երիտասարդների եւ պատանիների ձյուդոյի Եվրոպայի գավաթների հերթական խաղարկությունները:

Սալոնիկում Հայաստանի հավաքականի ավագ մարզիչ Մարտին Սարգսյանի ղեկավարությամբ մրցումներին մասնակցում են 8 ձյուդոյիստներ: Մրցումների առաջին օրը տասամի դուրս եկավ 2011-ի Եվրոպայի երիտասարդների չեմպիոն, նախորդ տարվա առաջնության մրցանակակիր Գարիկ Հարությունյանը, որն այս անգամ ուժերը չափեց ավելի բարձր՝ 60 կգ քաշային կարգում: Նա արժանացավ բրոնզե մեդալի:

Հայաստանին 2-րդ բրոնզե մեդալը պարգեւեց 52 կգ քաշային Երջանիկ Կարապետյանը, որը 3-րդ տեղի համար պայքարում մաքուր հաղթանակ տոնեց բրիտանացի Կելի Ստադոնի նկատմամբ:

Պատանիների առաջնությունում բրոնզե մեդալ նվաճեց Էդուարդ Գրիգորյանը (50 կգ):

## Սերգեյ Մովսիսյանը սկսեց հաղթանակով

Շախմատի Ռուսաստանի թիմային առաջնությունում Սերգեյ Մովսիսյանը Սանկտ Պետերբուրգի շախմատի ֆեդերացիայի թիմի կազմում հաղթանակով սկսեց մրցաշարը՝ հաղթելով ուկրաինացի Անդրեյ Զոնթախին: Մովսիսյանի թիմը 5-1 հաշվով հաղթեց «Պետրոպեկտիվային»: Վերջինիս կազմում հանդես եկող Արթուր Գաբրիելյանը պարտվեց Լեյնիեր Դոմինգուեսին, իսկ Գոռ Հայրապետյանը զիջեց Վադիմ Զվյագինցեւին:

Դեսնոգորսկի «Ատոմը» 0-6 հաշվով զիջեց «Բելոռեչենսկին»: «Ատոմի» կազմում պարտություններ կրեցին Գեորգի Պողոսյանը, Վահե Բաղդասարյանը, Գեւորգ Հարությունյանն ու Տիգրան Սիմոնյանը:

## Արմեն Այվազյանը գրավեց 27-րդ տեղը

Հոլանդացի գրոսմայստեր Լյուկ վան Վելիի հաղթանակով ավարտվեց շախմատի Սիդնեյի մրցաշարը: Վան Վելին 9 հնարավորից վաստակեց 7,5 միավոր: Ավարտական տուրում նա հաղթեց իրեն կես միավոր զիջող հնդիկ Սեթուրամանին եւ նվաճեց առաջին մրցանակը: 7 միավորով 2-րդ տեղը գրավեց չինացի Լի Չաոն:

Ավստրալահայ Արմեն Այվազյանը 5 միավորով զբաղեցրեց 27-րդ տեղը: Ավարտական 4 տուրերում նա հաղթեց Գեորգե Լեսթերին եւ Սաքար Նազարիին, ոչ-ոքի խաղաց Անտոն Սմիռնովի հետ ու պարտվեց Լուկ Լի Ջուհայոյին:

## Հայաստանի եւ Արցախի վետերան հանդբոլիստների մրցախաղերը կդառնան ավանդական




Մայրաքաղաքի խուլերի միավորման պալատի մարզասրահում կայացավ Հայաստանի եւ Արցախի վետերան հանդբոլիստների մրցախաղը, որը մեծ հետաքրքրություն էր առաջացրել ոչ միայն մարզասերների շրջանում: Հանդիպմանը ներկա էին Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, փոխքաղաքապետ Վանո Վարդանյանը, Արցախի հանդբոլի ֆեդերացիայի նախագահ, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը, Հայաստանի հանդբոլի ֆեդերացիայի նախագահ, ՀՀ վարչապետի վերահսկողության ծառայության պետ Սարգիս Գրիգորյանը:

Խաղահրապարակում բավականին հետաքրքրական պայքար ծավալվեց: Եվ թեեւ վետերան հանդբոլիստները դանդաղ էին գործում, սակայն զգացվում էր նրանց կուտակած փորձն ու վարպետությունը: 2 թիմերի կազմերում էլ քիչ չէին բարձրաստիճան զինվորականները; Մասնավորապես Հայաստանի հավաքականի կազմում խաղում էր ՀՀ ՊՆ ֆինանսական վարչության պետ, գեներալ Արմեն Հարությունյանը, իսկ Արցախի թիմի պաշտպանողների թվում էին գնդապետի կոչում ունեցող Գագիկ եւ Մխիթար Ավշարյան եղբայրները:

Խաղն անցավ հայաստանցի հանդբոլիստների առավելությամբ: Առաջին խաղակեսը նրանք շահեցին 12-6 հաշվով: 2-րդ խաղակեսում էլ կարողացան խաղը հաղթական ավարտի հասցնել՝ 25-21: Հանդիպման ամենաարդյունավետ խաղացողը Հայաստանի հավաքականի ռմբարկու Մխիթար Անտոնյանն էր, որը խփեց 8 գոլ:

Հանդիպումից հետո խաղի մասնակիցներին առաջինը ողջունեց Տարոն Մարգարյանը: Նա նշեց, որ տպավորված է հանդբոլիստների ցուցադրած խաղով, որում հաղթողներ եւ պարտվողներ չկան: Երեւանի եւ Ստեփանակերտի քաղաքապետարանների ղեկավարները հուշագիր են ստորագրել, որպեսզի սերտորեն համագործակցեն շատ բնագավառներում, այդ թվում՝ մարզական:

Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանն էլ նշեց, որ հանդիպումը մեծ բավականություն պատճառեց: Իսկ հանդբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սարգիս Գրիգորյանը հայտարարեց, որ այս միջոցառումը դառնալու է ավանդական: Նման հանդիպումները հաջորդաբար կանցկացվեն Ստեփանակերտում եւ Երեւանում: Մրցման ավարտին հուշագավաթ եւ թանկարժեք նվերներ հանձնվեցին Արցախի պատվիրակներին: Արցախցիները որպես նվեր ստացան նաեւ հանդբոլի 20 գնդակ:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Երեւանի վերգետնյա անցումների ծածկերի համար ահռելի ծախսե՞ր

## *Սպասենք Երեւանի հին-նոր քաղաքապետի կարգադրությանը*

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի նախընտրական հոլովակում նշվում է, որ 14 վերգետնյա անցումներ են կառուցվել քաղաքապետարանի կողմից Երեւանում: Երեւի կարիք չկա նշելու, թե ի՞նչ կարեւոր են դրանք անվտանգ երթեւեկություն ապահովելու առումով: Մեր թերթում անդրադարձել ենք այս թեմային՝ միաժամանակ մտահոգություն հայտնելով, որ վերոնշյալ անցումները կառուցվում են առանց ծածկերի, ինչն առնվազն անհասկանալի է: Հետեւաբար, հետեւյալ 2 հարցերն ուղղեցինք Երեւանի քաղաքապետին:

1. Ինչո՞ւ վերգետնյա անցումների համար ծածկերը նախատեսված չեն եղել:
2. 2013-ին կառուցվելիք վերգետնյա անցումների համար ծածկեր նախատեսվելո՞ւ են, թե՞ ոչ:

Մեր հարցերին, բավականին երկար ժամանակ հետո, պատասխանեց քաղաքապետարանի ծրագրման եւ ՆՆՓՀԱ բաժնի պետ **Էդ. Շաքարյանը**: Նրա պատասխանում մասնավորապես նշվում է, որ առայժմ նպատակահարմար չէ անցումների վրա ծածկեր կառուցել հետեւյալ պատճառներով.

1. կխաթարվի վերգետնյա անցումների էսթետիկ եւ շրջակայքի հետ համահունչ ու ներդաշնակ ճարտարապետական համայնապատկերը,
2. ծածկի առկայությունը լրացուցիչ ծանրությամբ կհանգեցնի կոնստրուկտիվ տարրերի ճկվածությանը, որն էլ պատճառ կդառնա նոր հաշվարկների՝ առաջ բերելով նախահաշվային գնի բարձրացում,
3. լրացուցիչ ֆինանսական ծախսերի հանրագումարում գոյացած գումարներով հնարավոր կլինի մեկ վերգետնյա անցում եւս կառուցել անհրաժեշտ հասցեում, որի առկայությունն ավելի ենք կարեւորում, քան այս պահին մի քանի անցումների ծածկերի տեղադրումը:

Ի՞նչ է մնում ասել քաղաքապետարանի պատասխանների առնչությամբ: Նախ՝ ի՞նչ կապ ունի ծածկի առկայությունը ճարտարապետական համայնապատկերին համահունչ, ներդաշնակ կամ էսթետիկ լինելու հետ: Անցումի նախագիծն իր ամբողջությամբ պետք է այնպես նախագծվի, որ լինի համահունչ, ներդաշնակ եւ էսթետիկ: Այդուհանդերձ, առանց ծածկերի վերգետնյա անցումները արդեն իսկ էսթետիկ չեն, քանի որ 21-րդ դարի քաղաք կամ, ինչպես սիրում են տեղի-անտեղի հայտարարել քաղաքապետարանի պաշտոնյաները, համայն հայության մայրաքաղաք Երեւանը 19-րդ դարի գյուղ չէ: Այստեղ կառուցվող վերգետնյա անցումներն էլ պետք է տարբերվեն 19-րդ դարի գյուղով անցնող գետի վրա գցված գերաններից: Այս պարզ ճշմարտությունը ոչ մի կերպ չեն ցանկանում գիտակցել Երեւանի քաղաքապետարանի «փայլուն ուղեղները»:

Ինչ վերաբերում է ծածկերի առկայության դեպքում անցումների գնի բարձրացմանը եւ խնայողության արդյունքում լրացուցիչ մեկ անցման կառուցմանը նախապատվություն տալուն, ապա բնական է, որ ծածկի կառուցումը պետք է բերի կառույցի արժեքի բարձրացմանը: Սակայն թե որքա՞ն եւ քանի՞ անցում ենք շահում ծածկեր չկառուցելով, քաղաքապետարանի պատասխանից անհայտ է մնում: Թեեւ ոչ մի հաշվարկ մեզ չի ներկայացվում այդ մասին, բայց պետք չէ ճարտարապետ կամ շինարար լինել հասկանալու համար, որ հողային աշխատանքներ, կապիտալ շինարարություն, երկաթբետոնյա կոնստրուկցիաների կառուցում ենթադրող աշխատանքների դեպքում թեթեւ կոնստրուկցիաներով ծածկերի ավելացումը լրացուցիչ ահռելի ծախսեր չի առաջացնի, ինչն էլ իբր խնայելով քաղաքապետարանը լրացուցիչ հասցեում անցում է կառուցելու:

Խնդիրն այստեղ այլ է: Ոչ ոք չի ցանկանում լրացուցիչ վերահաշվարկ, նախագծերում փոփոխություններ անել, երբ դրանց համար արդեն իսկ վարձատրվել են: Շինարարությունն իրականացնողներն էլ արդեն ստացել են իրենց վարձատրությունը, եւ բնական է, որ չեն ցանկանա դրանից հետո լրացուցիչ գործ անել եւ ծածկեր կառուցել: Մի խոսքով, շահում են այս գործում ընդգրկված թե՛ քաղաքապետարանի չինովնիկները, թե՛ նախագծող, թե՛ կառուցող կազմակերպությունների, հավանաբար ոչ պատահական մարդիկ, սեփականատերերը, իսկ տուժում ենք մենք բոլորս՝ երեւանցիներս, ստանալով կիսատ կառույցներ: Տուժում ենք, քանի դեռ Երեւանի քաղաքապետը, նայելով վերգետնյա անցումներին, չի հարցրել իր ենթականերին, իսկ ինչո՞ւ ծածկեր չունեն դրանք: Այ, երբ դա լինի, անմիջապես քաղաքապետանում կսկսեն հիմնավորել, որ առանց մեծ ծախսերի կարելի է ծածկեր կառուցել՝ ինչպես հարիր է ժամանակակից քաղաքին:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Ավարտվեց Հայաստանի ԶԼՄ-ների միջեւ անցկացվող մինի-ֆուտբոլի 4-րդ մրցաշարը

**«Գրանդ սպորտ» մարզահամալիրի դահլիճում ավարտվեց Հայաստանի ԶԼՄ-ների միջեւ անցկացվող մինի-ֆուտբոլի 4-րդ մրցաշարը: Եզրափակչի հիմնական եւ լրացուցիչ ժամանակն ավարտվել է ոչ ոքի՝ 3-3, իսկ հետխաղյա 5-մետրանոցներում ավելի դիպուկ էին «Մեդիամաքսի» խաղացողները, ովքեր եւ արժանացան գլխավոր մրցանակին՝ «Վիվա-Սել-ՄՏՍ-2013 գավաթին»: 3-րդ տեղը գրավեց news.am կայքի թիմը:**



**Մրցանակների արժանացան նաեւ 10 անվանակարգերում աչքի ընկած խաղացողները՝ լավագույն դարպասապահը, պաշտպանը, հարձակվողը, ռմբարկուն, երկրպագուն, խաղացողը, ֆուտբոլի վետերանը, թիմի ղեկավարը, ամենագեղեցիկ գոլի հեղինակը եւ մրցաշարը լավագույնը լուսաբանած լրագրողը:**

**Միջոցառման կազմակերպիչն Արտասահմանյան թղթակիցների ասոցիացիան է (ԱԹԱ): Վիվա-Սել-ՄՏՍ-ն ստանձնել էր մրցաշարի գլխավոր հովանավորությունը:**

ВТБ

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**«ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ հայտարարում է VMware vCenter համակարգի, սերվերային եւ Site Recovery Manager արտոնագրերի ձեռք բերման համար մասակարար կազմակերպություն ընտրելու նպատակով բաց մրցույթ:**

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ - Հայաստան բանկ»ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փ. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2013թ. մայիսի 10-ը, ժամը 16:00 ներառյալ: Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2013թ. մայիսի 10-ին, ժամը 17:30-ին: Մրցույթին մասնակցելու հրավերն ու մրցույթի պայմանները տեղադրված են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Մրցութային կոմիտե:

***Հասցեն՝ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փ. 46,***
***Կոնտակտային անձ՝***
***Լուսինե Սուսանյան***
***Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302***
***Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am***
***Հեղինե Մելքումյան***
***Հեռ. (+37410) 51-37-16***
***Էլ. փոստ՝ h.a.melkumyan@vtb.am***

ВТБ

## «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հարգելի հաճախորդներ,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՎՏԲ-Հայաստան Բանկե ՓԲԸ Մյասնիկյան մասնաճյուղում 15.02.2013թ.-ին սկսված վերանորոգման աշխատանքները կավարտվեն 01.06.2013թ.-ին: Այդ իսկ պատճառով Մյասնիկյանե մասնաճյուղի Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սպասարկումը կշարունակվի իրականացվել հետեւյալ մասնաճյուղում՝

▼ «Սպանդարյան» մասնաճյուղ – հասցե. ք. Երեւան, Մաշտոցի պողոտա 10 շենք,

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք զանգահարել Բանկի միասնական տեղեկատվական կենտրոն +(374 8000) 87-87 հեռախոսահամարով:

ՎՏԲ-Հայաստան Բանկի ղեկավարությունը հայցում է Ձեր ներողամտությունը պատճառված ժամանակավոր անհարմարությունների համար:

ВТБ

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**«ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ հայտարարում է VMware vCenter համակարգի, սերվերային եւ Site Recovery Manager արտոնագրերի ձեռք բերման համար մասակարար կազմակերպություն ընտրելու նպատակով բաց մրցույթ:**

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փ. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2013թ. մայիսի 10-ը, ժամը 16:00 ներառյալ: Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2013թ. մայիսի 10 -ին, ժամը 17:30-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերն ու մրցույթի պայմանները տեղադրված են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Մրցութային կոմիտե:

***Հասցեն՝ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փ. 46,***
***Կոնտակտային անձ՝***
***Լուսինե Սուսանյան***
***Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302***
***Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am***
***Հեղինե Մելքումյան***
***Հեռ. (+37410) 51-37-16***
***Էլ. փոստ՝ h.a.melkumyan@vtb.am***

ВТБ

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**«ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ մի շարք մասնաճյուղերում, ժամանակակից չափանիշներին համապատասխան IP հեռախոսակապի ներդրման հետ կապված մասակարար կազմակերպություն ընտրելու նպատակով «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ հայտարարում է բաց մրցույթ:**

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փ. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2013թ. մայիսի 8-ը, ժամը 17:00 ներառյալ: Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2013թ. մայիսի 10 -ին, ժամը 16:30-ին: Մրցույթին մասնակցելու հրավերն ու մրցույթի պայմանները տեղադրված են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Մրցութային կոմիտե:

***Հասցեն՝ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան փ. 46,***
***Կոնտակտային անձ՝***
***Լուսինե Սուսանյան***
***Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302***
***Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am***
***Հեղինե Մելքումյան***
***Հեռ. (+37410) 51-37-16***
***Էլ. փոստ՝ h.a.melkumyan@vtb.am***

*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*

**ՍԱՐԻ ԹԵՅ**

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ
**ԸՆՏԻՐ ԹԵՅ**

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

**Մեծածախ գնումների համար զանգահարել** 47-27-20, 47-03-63

**Տարեկան հաշվետվություն 2012 թ.**
**«Ազգ» օրաթերթ ՍՊԸ**

| | |
|---|---|
| Համախառն եկամուտ (դրամներով) | |
| այդ թվում՝ | |
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 30.324.067 |
| Սուբսիդիա | 2.050.000 |
| Ընդամենը | 32.374.067 |
| Համախառն ծախսեր (դրամներով) | |
| այդ թվում՝ | |
| Վարչական | 24.539.996 |
| Արտադրական | 7.834.071 |
| Ընդամենը | 32.374.067 |

***Տնօրենություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 8.4.2013, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: